

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Նախագահ Պայտրն Բոլորեց Պաշտօնավարման Մեկ Տարին

Անցեալ շաբաթ Միացեալ Նահանգներու նախագահ Ծո Պայտրն Բոլորեց իր պաշտօնավարման առաջին տարին:

Ան այս առթիւ հրաւիրած էր մամլոյ ասուլիս, որ Ամերիկայի նախագահական մամլոյ ասուլիսներու ամենէն երկարներէն մէկն էր: Պայտրն նախատեսուած ժամանակէն աւելի մնալով լրագրողներուն հետ, փորձեց պատասխանել իրեն ուղղուած ներքին ու արտաքին քաղաքականութեան վերաբերող բոլոր հարցերուն: Այսպիսով 79 ամեայ նախագահը կուզէր փարատել իր առողջութեան, յիշողութեան եւ տոկոսներու շուրջ իր հակառակորդներուն կողմէ երբեմն-երբեմն հնչող կասկածները:

Նախագահ Պայտրն իր պաշտօնի ստանձնման առաջին ամիսներուն ունէր բաւական բարձր վարկանիշ: Սակայն, վերջին մի քանի ամիսներուն այդ վարկանիշը մեծ անկում արձանագրած է: Տարբեր հարցախոյզերու համաձայն, նախագահի աշխատանքէն գոհ են ժողովուրդի 33-էն 43 տոկոսը միայն: Քաղաքական մեկնաբաններու կարծիքով Պայտրն մեծապէս կը տուժէ շարունակուող համաճարակին եւ ամէն տեսակի սպառնողական ապրանքներու, ուտեստեղէնի եւ քարիւղի սղաճին պատճառաւ: Գիներու ամէնօրեայ բարձրացումը զգալիօրէն կ'ազդէ քաղաքացիներու գրպանին եւ այս կը մղէ շատերուն մեղադրելու երկրի ղեկավարին: Հակառակ որ, Պայտրնի պաշտօնավարման առաջին 12 ամիսներուն անցաւ ընթացք փուլ մեծ՝ 6.4 միլիոն նոր աշխատատեղեր բացուած են, իսկ անգործութիւնը նուազած է, հասնելով 3.9 տոկոսի:

Միւս կողմէ, Դեմոկրատներու հսկողութեան տակ գտնուող Գոնկրէսի երկու Պալատները ձախողեցան վաւերացնել երկու կարեւոր օրինագիծեր, որոնք առաջնահերթութիւն կը ներկայացնէին Պայտրնին համար: Առաջինը կը վերաբերէր ընկերային քաղաքականութեան եւ կլիմայի փոփոխութեան դէմ պայքարին, իսկ երկրորդը՝ ընտրական օրէնսգիրքի փոփոխութեան՝ պաշտպանելու համար փոքրամասնութիւններու եւ յատկապէս սեւամորթ ամերիկացիներու բուժարկելու իրաւունքը, որ Հանրապետականներու կողմէ ղեկավարուող նահանգներէն ներս կ'ենթարկուին փոփո-

Հայաստանի Նախագահ Արմէն Սարգսեանի Հրաժարական Ներկայացուց իր պաշտօնէն:

«Ես շատ երկար եմ մտածել եւ որոշել եմ մօտ չորս տարի ապրել աշխատելուց յետոյ հրաժարական տալ Հանրապետութեան նախագահի պաշտօնից: Այդ որոշումը բացարձակապէս էմոցիոնալ չէ եւ բխում է որոշակի տրամաբանութիւնից», - յայտարարեց Արմէն Սարգսեան:

Յունուար 24-ին կայացած իր մամլոյ ասուլիսի ընթացքին, վարչապետ Նիկոլ Փաշինեան խօսելով այս մասին յայտնեց, որ հրաժարումի հրապարակումէն ժամեր առաջ միայն իմացած է այդ մասին: «Նա հրապարակումից 3.5 ժամ առաջ զանգահարել է ինձ, ու մենք խօսել ենք այդ մասին: Ես հանրապետութեան նախագահին հարցրել եմ, թէ ինքն ինձ հետ քննարկում է հարցը, թէ ինքն ինձ տեղեկացնում է, որ կայացրել է որոշում: Որից յետոյ ինքն ասել է, որ կայացրել է որոշում», ասուլիսի ժամանակ ըստ Նիկոլ Փաշինեանի: Արմէն Սարգսեան կը յայտնէ, որ նախագահը չունի անհրաժեշտ



Հայաստանի հրաժարեալ նախագահ՝ Արմէն Սարգսեան

գործիքներ՝ երկրի եւ ազգի համար ներկայիս բարդ ժամանակներուն ազդելու ներքին եւ արտաքին քաղաքականութեան արմատական գործընթացներուն վրայ: «Մեր պետութեան համար այս բարդ փուլում, երբ անհրաժեշտ է համազգային միասնութիւն, նախագահական ինստիտուտը չպէտք է դառնայ բամբասանքների ու

դաւադրութեան տեսութիւնների թիրախ՝ դրանով իսկ շեղելով հասարակութեան ուշադրութիւնը կարեւորագոյն խնդիրներից», - կը նշէ Արմէն Սարգսեան: «Կարող է հարց առաջանալ, թէ ինչու հրաժարական չտուեց 2018-ի զարնանը՝ յեղափոխութիւն»

«Կ'աջակցինք Պատնէշի Վրայ Մնացող Լիբանանի Ընկերներուն» Պէյրութի Մէջ Յայտարարեց ՄԴՀԿ Ատենապետ Ընկ. Համբիկ Սարաֆեան



Ընկ. Համբիկ Սարաֆեան ելոյթ կ'ունենայ Լիբանանի շրջանին կուսակցական պատասխանատուներուն հետ հանդիպումի ընթացքին

«Կը շարունակենք զօրակցիլ Լիբանանի մեր ընկերներուն եւ մեծապէս կը գնահատենք այս դժուար պայմաններուն մէջ անոնց դրսեւորած ազգային բարձր ոգին»: Այսպէս Պէյրութէն յայտարարեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Տօթք. Համբիկ Սարաֆեան: Հայաստանի արտախորհրդարանական քաղաքական ուժերուն հետ վարչապետ Նիկոլ Փաշինեանի

հերթական տեսակցութեան մասնակցելու նպատակով իր հայաստանեան այցելութեան նախօրէին, Ընկ. Սարաֆեան այցելեց Պէյրութ՝ մօտէն ծանօթանալով լիբանանահայ գաղութի իրավիճակին եւ կուսակցութեան պանթիոնին մէջ ամփոփելու իր հօր՝ վաստակաշատ Ընկ. Տիգրան Սարաֆեանի աճիւնը: Կեդրոնական վարչութեան ատենապետը ՀՄՄ-ի Պէյրութի

Փտածութեան Ընկալման Ձեկոյցով՝ «Հայաստանը Յաջողութեան Օրինակ»

«Թրենափերընսի Ինթերնէշնըլ» միջազգային ոչ-կառավարական կազմակերպութիւնը հրապարակած է փտածութեան (քորուփցիա) ընկալման 2021 թուականի համաթիւրը: Կառուցի փորձագէտները կը նշեն, որ աշխարհի մէջ երկու տարիէ մոլեգնող COVID-19 համավարակի ընթացքին փտածութեան ընկալումը գործնականին մէջ մնացած է նոյն մակարդակին:

Այս գեկոյցին մէջ ամփոփուած են 180 երկիրներու տուեալները: Չնայած պետական այլերու տուած խոստումներուն՝ 131 երկիրներու մէջ հականաղաղակապէս չէ արձանագրուած, 27 երկիրներ փտածութեան ընկալման առումով անցեալ տասնամեակին մէջ իրենց ամենացած միաւորները արձանագրած են:

Այս ցուցակով երկիրները կրնան ստանալ 0-էն մինչեւ 100 միաւոր: Որքան բարձր է ցուցանիշը, այնքան ցած է փտածութիւնը: Ձեկոյցին մէջ կ'ըսուի, որ Հայաստանը փտածութեան ընկալման ցուցակի տեսակէտէն կարելի է համարել անցեալ 5 տարուայ կտրուածքով «յաջողութեան օրինակ»:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Արմեն Սարգսեանի Ստերի Բուրգը Փլուեց. Նախագահը Ստիպուած Է Զրաժարական Տուել

ՍԱՍՍՈՆ ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԷՂԻԿ ԲԱՂՂԱՍԱՐԵԱՆ

Նախագահ Արմեն Սարգսեանը հրաժարականի դիմումում մի քանի պատճառ է նշել, սակայն կարծում ենք, որ դրանք քիչ առնչութիւն ունեն իր հրաժարականի հետ: Մեր կարծիքով, հրաժարականի պատճառը մէկն է՝ նա, ՀՀ քաղաքացի լինելուց բացի, նաեւ այլ երկրի քաղաքացի էր առնուազն մինչեւ նախագահ դառնալը:

Երբ կողմնակցի եւ կազմակերպուած յանցաւորութեան լուսաբանման նախագիծը (OCCRP) նախագահ Արմեն Սարգսեանին այլ երկրի քաղաքացի լինելու մասին հարցում ուղարկեց, նա ապացոյցներ ուզեց: Նշենք, որ այդ երկիրը Միացեալ Թագաւորութիւնը է, որի քաղաքացի էր Արմեն Սարգսեանը եւ որի մասին նրա ընտրուելուց առաջ յայտնի դարձաւ:

Արմեն Սարգսեանը կարիքեան ծովում գտնուող փոքր երկրի՝ Սենթ Քիթս եւ Նեւիսի քաղաքացի

է եղել:

Մենք տեղեկութիւն ունէինք, որ նախագահն ունէր Սենթ Քիթս եւ Նեւիսի անձնագիր, ինչը հաստատուեց Սարգսեանի հետ նամակագրութեան ընթացքում: Հետաքննութեան մանրամասներն այս փուլում չենք կարող ներկայացնել, քանի որ այն անդրսահմանային հետաքննութիւն է եւ դեռ աւարտուած չէ:

Երէկ՝ Յունուարի 23-ին, Հայաստանի նախագահը հրաժարականի մասին յայտարարութիւն տարածեց: Ուշագրաւ մի փաստ կայ՝ այդ յայտարարութիւնից առաջ նա պատասխանել էր Սենթ Քիթս եւ Նեւիսի իր քաղաքացիութեան մասին մեր մի շարք հարցերի: Այդ ժամանակ նա պաշտօնական այցով Արաբական Միացեալ Էմիրութիւններում էր: Այնտեղից մեկնեց արձակուրդ առողջական խնդիրների պատճառով: Իսկ հրաժարական տուեց՝ այդպէս էլ Հայաստան չվերադառնալով:

Երբ ապացոյցներ տրամադրելու իր խնդրանքին ի պատաս-

խան մենք փոխանցեցինք մեր ձեռքի տակ եղած նրա անձնագրային տուեալները, Արմեն Սարգսեանն իր վարկածն առաջ քաշեց:

Վարկածում նա նշում է, թէ տարիներ առաջ ներդրումներ է արել այդ երկրում: Նամակագրութեան մէջ նախագահը խոստովանել է, որ մասնաբաժին է ունեցել Սենթ Քիթս եւ Նեւիսի հիւրանոցներից մէկում: Ըստ պնդման՝ նա մասնաբաժինը փոխանցել է իր ընտանիքի անդամներից մէկին մինչեւ 2013 թ. Միացեալ Թագաւորութիւնում Հայաստանի դեսպան դառնալը:

Սենթ Քիթս եւ Նեւիսում ներդրումների դիմաց քաղաքացիութիւն ստանալու ծրագիր կայ, եւ Սարգսեանն ասում է, թէ առանց իր իմացութեան է ինքն այդ ծրագրով քաղաքացի դարձել: Մեզ ուղղած իր պատասխանում նա նշել է. «...իմ շարժառիթը ներդրումներ անելն էր, իսկ անձնագիրն ինձ ընդհանրապէս չէր հետաքրքրում»:

Ըստ Սարգսեանի պնդման՝ 2013-ին Միացեալ Թագաւորու-

թիւնում ՀՀ դեսպան նշանակուելուց առաջ յանձնարարել է իր իրաւաբանին Սենթ Քիթս եւ Նեւիսի անձնագիրը վերադարձնել պետութեանը:

Շարունակելով վարկածը՝ Սարգսեանը նշել է, թէ 2017-ին, երբ իրեն առաջարկ էր արուել ՀՀ նախագահ դառնալ, պարզել էր, որ վերոնշեալ յանձնարարութիւնը չի կատարուել: Պարզուել է նաեւ, որ այն անձը (ոչ իր իրաւաբանը), որը պէտք է զբաղուեր Սարգսեանի քաղաքացիութեան հարցերով, մահացել էր: Դրանից յետոյ Սարգսեանը նամակ է գրել հանգուցեալի որդուն, որը նոյն ընկերութիւնում է աշխատել, բացատրել է իրավիճակը եւ կրկնել է իր խնդրանքը: Փաստն այն է, որ Արմեն Սարգսեանը Սենթ Քիթս եւ Նեւիսի քաղաքացիութիւնից հրաժարուելու պաշտօնական գործընթացը սկսել է 2018-ի Մարտին նախագահ ընտրուելուց ոչ շատ շուտ:

Այս պարագայում Մահմանադրութեամբ նա չէր կարող նախագահ ընտրուել: Նրա ստորագրած բոլոր հրամանագրերը, այդ թւում՝ օրէնքները, պաշտօնեաների նշանակումները, ընտրութիւնները, նոյնիսկ վարչապետի նշանակումը, հակաօրինական են:

Սարգսեանը մեզ յայտնել է, թէ համարում է, որ Սենթ Քիթս եւ Նեւիսի քաղաքացի է այն պահից, երբ ներդրումների դիմաց քաղաքացիութիւնը ստանալուց յետոյ խնդրել է ստուգել այն:

Նախագահ Արմեն Սարգսեանը, հաւանաբար, Հայաստան չի վերադառնալ, քանի որ կարող է քրէական պատասխանատուութեան ենթարկուել փաստաթուղթ կեղծելու հիմքով:

«ՀԵՏՔ»

«Ամեն Անգամ Շաբար Ասելով՝ Բերանդ Զի Քաղցրանում»

ԱՐՄԵՆ ՎԱՐՂԱՆԵԱՆ

Արցախի Հանրապետութեան կարգավիճակի եւ ընդհանրապէս հիմնախնդրի կարգաւորման միջազգային մանդատ ունի միայն ԵԱՀԿ Մինսկի խումբը: Արցախի հիմնահարցը լուծուած չէ, ընդհակառակը՝ 44-օրեայ պատերազմի հետեւանքով այն աւելի է խորացել: Միջազգային հումանիտար իրաւունքի նորմերի խախտումներով, միջազգային ահաբեկչական խմբաւորումների ներգրաւմամբ, պատերազմական յանցագործութեան գործողութիւններով ատրպէյճանա-թուրքական հերթական ագրեսիան փաստեց, որ Արցախի Հանրապետութիւնը չի կարող լինել Ատրպէյճանի կազմում: Արցախի ժողովուրդն իր այդ կամքն արտայայտել է միջազգային բոլոր իրաւական նորմերին համահունչ իրականացուած հանրաքուէի միջոցով՝ ինքնորոշման իրաւունքի իրականացմամբ: Արցախի ժողովուրդն այսօր յայտարարում է, որ երբեք չի լինի Ատրպէյճանի կազմում, ինչը փաստում է, որ խնդիրը չի լուծուել պատերազմի միջոցով, հետեւաբար, պէտք է լուծուի քաղաքական բանակցութիւնների ճանապարհով: Սրան հակառակ՝ Ատրպէյճանը յայտարարում է, որ խնդիրը լուծուած է, եւ Մինսկի խմբին «թոյլ չի տայ» զբաղուել Արցախի հարցով:

Ատրպէյճանի նման պահուածքն աւելի շատ մանկամտութեան դրսեւորում է չի չեցնում: «Ամէն անգամ շաբար ասելով՝ բերանը չի քաղցրանում» յայտնի ասացուածքը լաւագոյն պատասխանն է Պաքուի առաջնորդին: Հայկական կողմը միշտ ասել է, որ Արցախի հարցն ուժային տարբերակով չի կարող լուծուել, եւ այսօր էլ արցախցին անդրդուելի է իր ինքնորոշման իրաւունքի պահպանման վճռականութեամբ: Այսօր էլ ԱՀ պաշտպանութեան բանակը կանգնած է շփման գծի երկայնքով ու շարունակելու է կանգնել, փաստը՝ օրերս սկսուած հերթական զօրակոչը:

Արցախցուն ոչ մէկը չի կարող ասել եւ պարտադրել, որ պէտք է Ատրպէյճանի հետ գտնուի ընդհանուր պետութեան մէջ, երբ նա հակառակի մասին յայտարարել է եւ արդէն ընդունել համապատասխան իրաւական ակտ, ընդ որում՝ ոչ մէկ հատ: Աւելին՝ այսօր ողջ աշխարհն է ասում, որ Արցախի հիմնահարցը չի լուծուել, եւ այդ կարծիքի առաջամարտիկները ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկրներն են: Առանձնակի նշանակութիւն ունի, թէ այդ առնչութեամբ ինչ է ասում Արցախում խաղաղապահ առաքելութիւն իրականացնող Մինսկի խմբի համանախագահ Ռուսաստանի Դաշնութիւնը:

Օրերս այդ մասին ՌԴ յստակ դիրքորոշումը ներկայացրեց ԱԳՆ-ի խօսնակ Մարիա Զախարովան: «Ռուսաստանը՝ որպէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր, աջակցում է այս ձեւաչափի աշխատանքի շարունակականութեանը, առաջին հերթին՝ իր մանդատին համապատասխան եւ, իհարկէ, հաշուի առնելով տարածաշրջանային իրողութիւնները, որոնք ի յայտ են եկել 2020 թուականից յետոյ», - յայտարարեց նա: Նա նաեւ յայտնել է, որ այդ դիրքորոշումը լիովին կիրառւում են ԵԱՀԿ Մինսկի խմբի միւս գործընկերները՝ Միացեալ Նահանգներն ու Ֆրանսան, եւ այն արտացոլուել է համանախագահ երկրների արտգործնախարարներին՝ 2021 թ. Դեկտեմբերի 7-ի համատեղ յայտարարութեան մէջ: Զախարովան յիշեցրել է, որ այս փաստաթուղթը կոչ է անում Պաքուին եւ Երեւանին մօտ ապագայում տարածաշրջանում ընդունել համանախագահներին, ինչը թոյլ կը տայ նրանց ուղղակիօրէն գնահատելու իրավիճակը տեղում, շօշափելի առաջընթացի հասնելու հումանիտար այն նախաձեռնութիւնների իրականացման գործում, որոնք

քննարկուել են Ատրպէյճանի եւ Հայաստանի արտգործնախարարների հետ եռեակի հանդիպումներում:

Յիշեցնենք, որ մինչ այդ արցախեան խնդրի կարգաւորուած չլինելու մասին յայտարարել էր նաեւ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լաւրովը՝ շեշտելով, որ արցախեան հարցը լուծուած չէ: Վերջինս այդ ձեւակերպումն արեց հայ-ատրպէյճանական սահմանի սահմանազատման եւ սահմանագծման գործընթացին անդրադառնալիս. «Մենք կողմ ենք Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանագծումը հնարաւորինս շուտ սկսելուն: Սա չի վերաբերում Արցախի տարածաշրջանին եւ նրա խնդրի կարգաւորմանը, սա գուտ երկկողմ հարց է, եւ արդէն մէկ տարի է, ինչ մենք առաջարկում ենք այդ հարցով սկսել աշխատել՝ սահմանազատման եւ սահմանագծման յանձնաժողով ստեղծելով»: Այսպիսով, ի դէմս Ռուսաստանի, Մինսկի խմբի համանախագահները ժխտում են Ատրպէյճանի պնդումները, թէ Արցախի խնդիրը լուծուած է: Եթէ նախկինում այս միտքը հնչեցուած էր տարբեր յաճախականութեամբ արուող ակնարկների միջոցով, այս այսօր այդ մասին աւելի յաճախ ուղիղ խօսքում է ասոււմ, ինչը վկայում է ատրպէյճանական անիրատեսական եւ ոչ կոռեկտ քաղաքականութիւնից միջազգային հանրութեան յղած լինելու մասին: Ստեղծուած իրավիճակում Պաքուն ստիպուած է աւելի պրագմատիկ գործելաճ ընտրել եւ վերադառնալ Արցախի Հանրապետութեան շուրջ քաղաքական բանակցութիւնների սեղանի շուրջ, որը բխում է նաեւ իր շահերից՝ տարածաշրջանում հազորակցութեան ուղիների շուտափոյթ բացման համատեքստում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Զրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնորհու ինձ արտայայտուող բոլոր միտքերը



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com


(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Հայաստան Շուրջ 300 Միլիոն Տոլարի Աջակցութիւն Պիտի Տրամադրէ Արցախին



Հայաստանի եւ Արցախի պատուիրակութիւններուն միջեւ համդիպումի ընթացքին

2022 թուականին Հայաստանի կառավարութիւնը շուրջ 144 միլիոն դրամի (300 միլիոն տոլար) աջակցութիւն պիտի տրամադրէ Արցախին...

Փաշինեանի եւ Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանի գլխաւորութեամբ այդ քննարկման ընթացքին...

Արդէն 300 բնական աւար-

տած է եւ յանձնուած է հիմնականին մէջ տեղահանուած գոհուածներու ընտանիքներուն եւ այն ընտանիքներուն...

«144 միլիոն դրամի պարագայում մեզ յաջողուելու է լուծել առկայ խնդիրները եւ ոչ միայն բնակարանաշինութեան: Մենք շատ յաւակնոտ ծրագրեր ենք սկսել...

ԱԱԾ-ն Ստուգման Առարկայ Պիտի Դարձնէ Արմէն Սարգսեանին Առնչուող «Հետք»-ի Հրապարակումը

Մինչեւ 2018-ին Հայաստանի նախագահ դառնալը Արմէն Սարգսեանի՝ նաեւ այլ երկրի քաղաքացիութիւն ունենալու մասին «Հետք» պարբերականին հրապարակումը...

Անցեալ տարուան Մարտին 53 փաստաբաններ յանցագործութեան մասին հաղորդում ներկայացուցած էին գլխաւոր դատախազին այն մասին, որ նախագահ ընտրուելէ առաջ Արմէն Սարգսեանը առերեւոյթ թաքցուցած է երկքաղաքացիութեան փաստը...

Գլխաւոր Դատախազութիւնը գտած էր, որ ՅԲԾ-ի նախապատրաստած նիւթերը առերեւոյթ պարունակած են փաստաթուղթ կեղծելու յատկանիշեր եւ Ապրիլ 27-ին Դատախազութիւնը վերացու-

ցած էր ՅԲԾ-ի որոշումը եւ քրէական գործ յարուցած էր, նախաքննութիւն կատարելու համար ուղարկուած էր ՅԲԾ: ՅԲԾ-ի լուծարումէն յետոյ գործը կը գտնուի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան վարչութիւն մէջ:

Նախագահին երկքաղաքացի ըլլալու հարցը նոր չէ որ կը քննարկուի: Այն շրջանառուեցաւ դեռ ՀՀ-ական իշխանութեան կողմէ անոր առաջադրման ժամանակ: Այս հարցը ըստ էութեան փակուած համարուեցաւ, երբ 2018 թուականի Ապրիլ 27-ին այդ ժամանակ դեռ ժողովրդական ցոյցերը առաջնորդող Նիկոլ Փաշինեան անոր հետ ունեցած հանդիպումէն յետոյ գրառում կատարեց, թէ Սարգսեանը իրեն ներկայացուցած է փաստաթուղթեր այն մասին, որ Մեծն Բրիտանիոյ քաղաքացիութիւնը կորսնցուցած է 2011 թուականի Դեկտեմբերին:

«Հետք»-ի վերջին հրապարակումը այն մասին է, որ Արմէն Սարգսեանը ՀՀ քաղաքացի ըլլալէ բացի, նաեւ այլ երկրի քաղաքացի էր առնուազն մինչեւ նախագահ դառնալը: Խօսքը այս պարագային ոչ թէ Մեծն Բրիտանիոյ, այլ՝ Քարիպեան ծովուն մէջ գտնուող եւ հարկային դրախտ համարուող փոքր երկրի՝ Սենթ Քիթս եւ Նեւիսի քաղաքացի ըլլալու մասին է:

Սերժ Սարգսեան Եւ Նախկին Նախարարներ Հարցաքննուած Են Սեղրիի Երկաթագիծի Յափշտակման Գործով

Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսեանը, պաշտպանութեան նախկին նախարարներ, ինչպէս նաեւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին պաշտօնատար անձեր հարցաքննուած են Սեղրի-Կապան երկաթագիծի մէջ հատուածին մէջ յափշտակութեան գործով:

«Քրէական գործի քննութեան ընթացքում հարցաքննուել են ՀՀ երրորդ նախագահը, պաշտպանութեան նախկին նախարարները եւ նախարարների նախկին տեղակալը, փոխադրամիջոցների եւ կապի նախկին նախարարն ու վերջինիս նախկին տեղակալը, ինչպէս նաեւ ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան եւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին պաշտօնատար անձինք. նախաքննութեան այս փուլում որպէս մեղադրեալ ներգրաւուած անձինք չկան», կը նշեն ՀՀ Քննչական կոմիտէէն:

Կը յայտուի նաեւ, որ քննութեան առարկայ հանդիսացած եւ հաշուի առնուած է նաեւ երկաթագիծի քանդման աշխատանքներուն մէջ ՀՀ զինուած ուժերու ստորաբաժանումներու մասնակցութեան հանգամանքը:

«Քննուող քրէական գործի

նախաքննութիւնը շարունակուած է՝ Սեղրի-Կապան 46,7 քմ երկաթուղծեամբ երկաթգծի մի հատուածում յափշտակութիւն կատարած անձանց բացայայտելու ուղղութեամբ», կ'ամփոփէ ՀՀ Քննչական կոմիտէն:

2017-ի Օգոստոսին «Սիվիլ-նեթ»ը երկաթագիծի թախանիս վերաբերեալ հրապարակում կատարեց, որմէ յետոյ ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամաւոր էստմոն Մարուքեան դիմեց գլխաւոր դատախազին, յարուցուեցաւ քրէական գործ:

2021-ի Յունուար 11-ին Մոսկուայի մըջ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի ղեկավարները որոշեցին սկիզբ դնել ապաշրջափակման գործընթացին: Մէկ տարուայ ընթացքին բանակցութիւնները հասան այն փուլին, որ հարկաւոր է նախ եւ առաջ շահագործել երկաթագիծը:

Սեղրիի երկաթագիծի վերականգնումը, նախնական գնահատականով, պիտի արժէ 200 միլիոն տոլար ու պիտի տեւէ երեք տարի: Ատրպէյճանը, իր հերթին, այս տարուան սկիզբը սկսած է Հորատիգ-Սեղրի երկաթուղիի վերականգնումը:

Քրիսթին Գրիգորեան Ընտրուեցաւ Սարդու Իրաւունքներու Պաշտպան

Հայաստանը մարդու իրաւունքներու նոր պաշտպան ունի: Այսօր Ազգային ժողովը փակ-գաղտնի քուէարկութեամբ, 68 կողմ եւ 0 դէմ ձայներու յարաբերակցութեամբ, Մարդու իրաւունքներու պաշտպանի պաշտօնին ընտրեց Քրիսթին Գրիգորեանը:

40-ամեայ Գրիգորեանը 2019 թուականի Յունիս 3-էն մինչեւ այս ամսուայ 20-ը զբաղեցուցած է արդարադատութեան փոխնախարարի պաշտօնը: Մինչ այդ ալ պետական համակարգին մէջ տարբեր պաշտօններ զբաղեցուցած է:

Գործող պաշտպան Արման Թաթոյեանի պաշտօնավարման ժամկէտը կը լրանայ Փետրուար 23-ին: Ան մարդու իրաւունքներու պաշտպանի պաշտօնը ստանձնած էր 2016 թուականի Փետրուար 23-ին: Ըստ օրէնքի՝ նոր պաշտպանը իր պարտականութիւններու կատարման կ'անցնի Ազգային ժողովին մէջ երկրման արարողութիւնէն յետոյ, նախորդ ՄԻՊ-ի պաշտօնավարման ժամկէտի աւարտման յաջորդ օրը:

Քրիսթին Գրիգորեանի թեկնածութիւնը առաջադրած էր իշ-



Սարդու իրաւունքներու նորընտիր պաշտպան՝ Քրիսթին Գրիգորեան

խող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը: Իշխանականները կը համարեն, որ Գրիգորեանը արհեստավարժ է եւ կը համապատասխանէ այդ պաշտօնին: Մինչդեռ ընդդիմադիրները քննադատութեան ենթարկեցին Գրիգորեանը՝ համարելով, որ ան պիտի դառնայ իշխանութեան պաշտպանը:

2021 Թուականին 1000 Մեծ Հարկատուները Վճարած Են 2.4 Միլիարդ Տոլար

Հայաստանի Պետական Եկամուտներու կոմիտէն կը յայտնէ, որ Հարկային Մարմինին կողմէ հրապարակուած է 2021 թուականի Յունուար-Դեկտեմբեր ամիսներու ընթացքին առաջին 1000 մեծ հարկ վճարողներուն կողմէ վճարուած հարկերուն վերաբերեալ տեղեկատուութիւնը:

1000 մեծ հարկ վճարողներու կողմէ 2021 թուականի 12 ամիսներուն ընթացքին պետական պիւտճէ ընդհանուր առմամբ վճարուած է աւելի քան 1 թրիլիոն 206 միլիարդ դրամ (2,4 միլիարդ տոլար): Հարկային Մարմին կատարուած վճարումներուն գումարը կազմած է աւելի քան 989 միլիարդ 980 միլիոն դրամ, իսկ Մաքսային Մարմին կատարուած վճարումներուն գումարը կազմած է աւելի քան 216 միլիարդ 881 միլիոն դրամ: Ցանկին մէջ ներառուած են պետական եւ համայնքային կառավարչական հիմնարկները:

ԼՈՒՐԵՐ

Նիկոլ Փաշինեան Առցանց Մամլոյ Ասուլիսի Ընթացքին Պատասխանց Լրագրողներու Հարցերուն



Վարչապետ Նիկոլ Փաշինեան առցանց մամլոյ ասուլիսի ընթացքին

Յունուար 24-ին կայացած առցանց մամլոյ ասուլիսի ընթացքին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադաձաւ բազմաթիւ հարցերու՝ Նախագահ Արմէն Սարգսեանի հրաժարականէն մինչեւ Թուրքիոյ հետ յարաբերութիւններուն եւ Հայ Դատին:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան նախագահի պաշտօնէն հրաժարական տալու Արմէն Սարգսեանի որոշման յայտարարութեան մասին տեղեկացած է հրապարակայնացումէն մօտաւորապէս երեքուկէս ժամ առաջ:

«Նա հրապարակումից 3.5 ժամ առաջ գանգահարել է ինձ, ու մենք խօսել ենք այդ մասին: Ես հանրապետութեան նախագահին հարցրել եմ, թէ ինքն ինձ հետ քննարկու՞մ է հարցը, թէ ինքն ինձ տեղեկացնում է, որ կայացրել է որոշում: Որից յետոյ ինքն ասել է, որ կայացրել է որոշում», ասուլիսի ժամանակ ըսաւ Նիկոլ Փաշինեան:

Հարցին՝ սահմանազատման ու սահմանազծման գործընթացին վերաբերեալ Երեւանը ի՞նչ առաջարկներ ներկայացուցած է Պաքուին, վարչապետը նախ արձագանգեց, որ այդ առաջարկը փոխանցել են եւ ուսու գործընկերներուն, եւ Ատրպէյճանին՝ ուղիղ. «Եւ որ այդպիսի առաջարկներ լինելու են, ես այդ մասին տեղեկացրել եմ Ատրպէյճանի նախագահին Պրիւսէլու մեր ունեցած հանդիպման ընթացքում: Առաջարկները ոչ թէ հէնց սահմանազատման մասին են, մեր առաջարկը վերաբերում է հէնց անվտանգութեան միջոցառումներին, ինչի մէջ ընդհանուր առումով ոչ մի գաղտնիք չկայ: Դրանք այն առաջարկների մասին են, որոնց մասին ես խօսել եմ դեռեւս Մայիսին՝ հայելային ետքաշման առաջարկը»:

Ան շեշտեց՝ հայկական կողմը չէ փորձած փաստաթուղթ ձեւաւորել, որ կ'արտայայտէ զուտ Հայաստանի տեսակէտը. «Հիմա քննարկումները շարունակու՞մ են, եւ մենք չենք ուզում շատ մանրամասնութիւններ բացայայտելով խաթարենք աշխատանքային քննարկումը: Մենք կարծում ենք, որ սահմանազատման եւ սահմանազծման յանձնաժողովը պէտք է օր առաջ ձեւաւորուի, եւ դա շատ կարեւոր է, ինչքան շուտ, այնքան ակելի լաւ»:

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը Անթալիոյ դիւանագիտական համաժողովին մասնակցելու

հրաւեր ստացած է: Լրատուամիջոցները Հայաստանի վարչապետէն հետաքրքրուած էին՝ պիտի ընդունի՞ հայկական կողմը այս հրաւերը:

«Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների կարգաւորման ձեւաչափ է ձեւաւորուել, եւ արդէն իսկ տեղի է ունեցել առաջին հանդիպումը ներկայացուցիչների: Ես կարծում եմ, որ եթէ այս ընթացքը պահպանուի, շատ մեծ է հաւանականութիւնը, որ ՀՀ-ն այդ համաժողովին մասնակցելու հրաւերը կ'ընդունի: Ի հարկէ, ամէն ինչ կախուած է այդ պահին առկայ իրավիճակից, բայց յամենայն դէպս առաջին հանդիպումից յետոյ մեծանում է հաւանականութիւնը, որ Հայաստանը կ'ընդունի այդ հրաւերը», պատասխանեց Փաշինեանը:

Ինչ կը վերաբերի Յեղասպանութեան ճանաչման, ան շեշտեց, որ իրենց դիրքորոշումը արտայայտած են կառավարութեան ծրագրին մէջ՝ աւելցնելով, որ Հայաստանի Հանրապետութիւնը երբեք Հայ դատի քաղաքականութիւն չէ վարած: «Յեղասպանութեան ճանաչման գործընթացը վարողը միշտ էլ եղել է Սփիւռքն ու Սփիւռքի կազմակերպութիւնները», ըսաւ ան:

«Ազատութեան» հարցադրման, թէ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինը հեռախօսազրոյցի ընթացքին անդրադարձած է ԱՄՆ-Ռուսաստան բանակցութիւններու ընթացքին, ի՞նչ տպաւորութիւն ստացած է այդ գրոյցէն, հնարաւոր է, որ ուսու-ուքրանական ճգնաժամը ընթանայ առճակատման ճանապարհով, եւ այդ պարագային հնարաւոր է ՀԱՊԿ-ի, այդ շարքին՝ Հայաստանի ներգրաւումը, Նիկոլ Փաշինեանը պատասխանեց, որ բնականաբար, այդ իրավիճակը կը յուզէ նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը. «Այդ պատճառով մենք մեր մտահոգութիւնները կիսում ենք մեր միջազգային գործընկերների հետ, ընդ որում մտահոգութիւնները կիսում ենք ՀԱՊԿ-ի մեր գործընկերների հետ, նաեւ արեւմտեան մեր գործընկերների հետ ենք կիսում: Բնականաբար, մենք շահագրգռուած ենք, որ իրավիճակը վերահսկողութիւնից դուրս չգայ Ուքրանիայում: Յանկացած իրավիճակում մենք առաջնորդու՞մ ենք Հայաստանի ազգային շահերին համապատասխան»:

Մենք պէտք է երթանք արհեստավարժ բանակի ուղղութեամբ,

Ալէն Սիմոնեան Փելոսիին Ներկայացուցած Է Իրավիճակը 44-Օրեայ Պատերազմէն Յետոյ



Ալան Սիմոնեան Պատուոյ Շքանշան կը յանձնէ Ներկայացուցիչներու Տան խօսնակ՝ Նենսի Փելոսիին

Ատրպէյճանի իշխանութիւնները կը շարունակեն բացայայտորէն սպառնալ Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան եւ կը շարունակեն ոտնձգութիւնները անոր տարածքին նկատմամբ: Այս մասին յայտնած է Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան՝ Ուաշինկթընի մէջ ԱՄՆ Գոնկրէսի Ներկայացուցիչներու պալատի խօսնակ Նենսի Փելոսիի հետ հանդիպման ժամանակ, տեղեկացնելով Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան ներկայ փուլին եւ 44-օրեայ պատերազմէն յետոյ տարածաշրջանին մէջ տիրող իրավիճակի մասին:

Սիմոնեան վերահաստատած է Հայաստանի պատրաստակամութիւնը՝ աշխատելու տարածաշրջանին մէջ երկարաժամկէտ խաղաղութեան եւ անվտանգութեան հաստատման ուղղութեամբ:

Ազգային ժողովի հաղորդագրութեան համաձայն՝ կողմերը համակարծիք եղած են, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան վերջնական կարգաւորումը կրնայ ձեռք բերուիլ միայն խաղաղ բանակցութիւններու ճանապարհով՝ ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահութեան հովանիին ներքոյ: Քննարկուած են նաեւ Ատրպէյճանի կողմէ հայ ռազմագերիներու անյապաղ ազատ արձակման, ինչպէս նաեւ տարածաշրջանին մէջ հաղորդակցութեան բոլոր գիծերու բացման վերաբերող հարցեր:

Ալէն Սիմոնեան ներկայացուցած է Հայաստանի կողմէ 2018 թուականին Թաւշեայ յեղափոխութենէն յետոյ ժողովրդավարական հիմնարկներու եւ օրէնքի գերակայութեան ամրապնդման գործին

յայտարարեց Նիկոլ Փաշինեան: Անոր ներկայացմամբ՝ այդ նոյնը չէ, ինչ պայմանագրային ծառայողներով համալրուած բանակը:

«Մենք ամէնօրեայ կարգով պէտք է գնանք եւ հնարաւորինս շուտ հասնենք դրան: ՀՀ-ն յստակ արձանագրում է, որ մենք Զինուած ուժերի առաջ խնդիր չենք դնելու տարածքներ նուաճելու, այլ ՀՀ տարածքային ամբողջականութիւնը եւ ինքնիշխանութիւնը պահպանելը եւ պաշտպանելն է մեր Զինուած

մէջ արձանագրուած հետեւողական յառաջընթացը, Հայաստանի իշխանութիւններուն եւ խորհրդարանին ջանքերը՝ փտածութեան դէմ պայքարի եւ թափանցիկութեան ու հաշուետուողականութեան բարձրացման ուղղութեամբ, ինչպէս նաեւ ազատ եւ արդար ընտրութիւններուն դերը բարեփոխումներու անշրջելիութեան ապահովման գործին մէջ: Կողմերը վերահաստատած են, որ ժողովրդավարութիւնը հայ-ամերիկեան համագործակցութեան կարեւորագոյն հիմնասիւներէն է:

Ազգային ժողովի նախագահը բարձր գնահատած է Գոնկրէսի հայկական հարցերով խումբին գործունէութիւնը: Ալէն Սիմոնեան երախտագիտութիւն յայտնած է խօսնակ Փելոսիին եւ անոր բոլոր գործընկերներուն՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ համապատասխան բանաձեւի ընդունման գործին մէջ արժէքաւոր ներդրման համար:

Հանդիպման ընթացքին Նենսի Փելոսիին յանձնուած է Պատուոյ շքանշան՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակին առիթով, հայ-ամերիկեան բարեկամական յարաբերութիւններու ամրապնդման եւ զարգացման գործին մէջ ներդրած նշանակալի աւանդին համար: Հանդիպման մասնակցած են ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատի փոքրամասնութեան ղեկավար հանրապետական Քեվլըն ՄըքՔարթին, հանրապետականներ Տէյլլիտ Վալատտոն, Կաս Պիլիքաքիսը, դեմոկրատներ Ֆրենք Փալոնը, ձեքի Սփիրը, Ատամ Շիֆը եւ Աննա էշուն:

ուժերի խնդիրը», յայտարարեց ան:

Հայաստանը յստակ արձանագրած է, որ ՀԱՊԿ ուժերը չեն կրնար ներգրաւուած ըլլալ ինչ-որ ներքաղաքական գործընթացներու մէջ, այլ կրնան զբաղիլ ռազմավարական նշանակութեան կառուցներու պահպանութեամբ, անդրադառնալով զազախական իրադարձութիւններուն ու ՀԱՊԿ խաղաղապահ ուժերը աջակցող մեկնելուն, ըսաւ Նիկոլ Փաշինեանը:

Լիբանանի Նախկին Վարչապետ Սաատ Յարիրի Կը Հեռանայ Քաղաքականութենէն



Լիբանանի Նախկին վարչապետ՝ Սաատ Յարիրի

Լիբանանի նախկին վարչապետ, սիւննի համայնքի առաջնորդ՝ Սաատ Հարիրի յայտարարած է քաղաքականութենէն հեռանալու մասին:

«Մուսթաֆալ» հոսանքի առաջնորդ, Լիբանանի նախկին վարչապետ Սաատ Հարիրի յայտարարած է, որ կը հեռանայ քաղաքական ասպարէզէն: Պէյրութի մէջ կայացած մամուլի ասուլիսի ընթացքին ան ըսած է, որ պիտի չառաջադրուի Մալիսի կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն:

Աւելի առաջ, ընտրութիւններուն մասնակցելէ հրաժարելու մասին յայտարարած էին նաեւ շարք մը այլ քաղաքական ուժեր, իրենց այդ որոշումը բացատրելով «երիտասարդ սերունդի քաղաքական գործիչներուն համար երկիրը թարմացնելու տարածք բանալու»:

Արմէն Սարգսեանի Հրաժարականը

Շարունակուած էջ 1-էն

Կից յետոյ: Պատասխանն ակնյայտ է՝ այն պատասխանատուութեան պատճառով, որը ես վերցրել էի ինձ վրայ՝ ստանձնելով Հանրապետութեան նախագահի պաշտօնը: Ես պարտաւոր էի անել ինձնից կախուած ամէն ինչ՝ բացառելու ներքին պառակտման յետագայ խորացումը, հնարաւոր բախումները, որոնք կարող էին յանգեցնել չափազանց բացասական հետեւանքներ: Ես նաեւ ձգտում էի իմ երկարամեայ աշխատանքի շնորհիւ ձեռք բերած հեղինակութիւնը, կապերը եւ իմ միջազգային քաղաքական ու տնտեսական ներուժը ծառայեցնել ուժեղ եւ կայուն պետականութեան կառուցմանը», - կը բացատրէ նախագահը:

Ան կը պնդէ որ, չէ կարողացած ազդել այն քաղաքական իրադարձութիւններուն վրայ, որոնք երկիրը հասցուցած են ներկայիս ճգնաժամին, քանի որ համապատասխան գործիքներու պակաս կայ:

Արմէն Սարգսեան կ'ըսէ որ, ինք առաջարկած է ոչ թէ կառավարման մէկ ձեւէն միւսին անցնել, այլ՝ զսպումներու եւ հակակշիռներու վրայ հիմնուած պետական համակարգ ստեղծելը:

Արմէն Սարգսեան գոհունակութեամբ կ'արձանագրէ, որ ստեղծուած է սահմանադրական փոփոխութիւններու յանձնաժողով եւ յոյս կը յայտնէ, որ ի վերջոյ, սահմանադրական փոփոխութիւնները տեղի կ'ունենան եւ յաջորդ նախագահն ու նախագահական ինստիտուտը կը կարողա-

մտադրութեամբ: 51-ամեայ Հարիրին քաղաքական գործունէութիւնը սկսած է 2005 թուականին՝ հօր՝ երկրի նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի սպանութենէն յետոյ: 2009 թուականին դարձած է Լիբանանի վարչապետ, պաշտօնավարած է մինչեւ 2011 թուական, այնուհետեւ 2016 թուականին վերադառնալով այդ պաշտօնին՝ ան նոր դարաշրջան խոստացաւ երկիրին՝ ղեկավարելով մինչեւ 2020:

Հարիրի հրաժարական տուաւ երկիրին մէջ խորացող քաղաքական եւ տնտեսական ճգնաժամի լոյսին տակ, որ կը շարունակուի մինչեւ օրս: Միջազգային կառույցներու ղեկավարութեան մօտ 80 տոկոսը կ'ապրի աղքատութեան մէջ, ազգային դրամանիշը արժեզրկուած է աւելի քան 90 տոկոսով:

նան աշխատիլ աւելի հաւասարակշռուած եւ համակարգուած միջավայրի մէջ:

Նախագահը իր դժգոհութիւնը կը յայտնէ իր անձին նկատմամբ եղած բամբասանքներուն նկատմամբ: «Պետութեան գլուխը եւ երբեմն նաեւ նրա ընտանիքը թիրախաւորուած են տարբեր քաղաքական խմբաւորումների կողմից: Վերջիններս այնքան էլ հետաքրքրուած չեն նախագահական ինստիտուտի կողմից ի շահ երկիր իրականացուած ձեռքբերումներով, որքան իմ անցեալով, դաւադրութեան զանազան տեսութիւններով ու միջոցներով: Իմ անձի հանդէպ այդ մտահոգութեան վերջնական դուրս է գալիս նաեւ բարոյականութեան սահմաններից՝ վերջնական արդիւնքում ուղղակիօրէն բացասաբար ազդելով առողջութեան վրայ», - իր յայտարարութեան մէջ կը շեշտէ ան:

Արմէն Սարգսեան նախագահի պաշտօնին ընտրուած էր Ազգային ժողովին կողմէ 2018-ի Մարտի 2-ին, Ապրիլի 9-ին ստանձնելով իր պաշտօնը, երբ սկսաւ գործել նոր Սահմանադրութիւնը:

Սահմանադրութեան համաձայն՝ հանրապետութեան նախագահի հրաժարականի պարագային նախագահի լիազօրութիւնները, մինչեւ նոր նախագահի ընտրութիւնը, կը փոխանցուին Ազգային ժողովի նախագահին: Նախագահի պաշտօնը թափուր մնալէ ոչ շուտ, քան քսանհինգ, եւ ոչ ուշ, քան երեսունհինգ օր ետք տեղի կ'ունենան նախագահի արտահերթ ընտրութիւն:

Պուէնոս Այրէսի Մէջ Մահացած Է Վաստակաշատ Ընկ. Սամօ Սարգիսեանը



Յունուար 25-ին, Պուէնոս Այրէսի մէջ մահացած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան եւ «Շարժում» մշակութային միութեան հաւատաւոր եւ նուիրեալ անդամներէն Ընկ. Սամօ Սարգիսեանը:

Նախկին Լիբանանահայ՝ Ընկ. Սարգիսեան վարած է «Շարժում» շաբաթաթերթի խմբագրի պաշտօնը, եղած է ՍԴՀԿ Արժանիքի Վարիչ Մարմինի ատենապետ: Ան պաշտօնավարած է Պուէնոս Այրէսի հայկական վարժարաններէն ներս:

Վաստակաշատ Ընկ. Սարգիսեան ՍԴՀԿ Համագումարներուն կողմէ ընտրուած է Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ:

Այս առթիւ մեր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնենք Ընկերոջ այլիին՝ Ընկերուհի Անի Սարգիսեանին եւ Արժանիքի շրջանի մեր բոլոր ընկերներուն:

ԸՆԿ. Համբիկ Սարաֆեան

Շարունակուած էջ 1-էն

ակումբին մէջ տեսակցեցաւ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի, մասնաճիւղերու ղեկավարներուն եւ կուսակցութեան հովանաւորութիւնը վայելող կառույցներու ատենապետներուն ու պատասխանատուներուն հետ: Հանդիպումը առիթ եղաւ արծարծելու ընդհանրապէս հայրենիքը եւ մասնաւորապէս լիբանանահայութիւնը հետաքրքրող նիւթերը, մտահոգութիւնները, հայաստանեան նորագոյն իրադարձութիւնները եւ սպասուող զարգացումները: Իր խօսքը փոխանացել է ետք ներկաներուն, Ընկ. Սարաֆեան նաեւ պատասխանեց անոնց հարցումներուն, կուսակցութեան միաւորներուն յորդորելով շարունակել իրենց ազգանուէր աշխատանքը եւ ծառայել համայնքին:

Ընկ. Համբիկ Սարաֆեան նաեւ այցելեց ՄԱՀԱՅՄ նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեանին, ընկերակցութեամբ Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկ. Ալեքսան Բէօշկէրեանի եւ ՍԴՀԿ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի փոխատենապետ Ընկ. Տօքթ. Մարտիկ Ժամկոչեանի:

Տեսակցութեան ընթացքին քննարկուեցան հայ ժողովուրդին եւ լիբանանահայութեան վերաբերող թղթածրարներ: Ժողովականները փոխանակեցին իրենց տեսակէտերը:

Ընկ. Սարաֆեան նաեւ հակիրճ հարցազրոյց մը տուաւ ՍԴՀԿ պաշտօնավարութեան «Արարատ» օրաթերթին:

Ընկ. Սարաֆեան գոհունա-

կութեամբ շեշտեց, որ գաղութը կը շարունակէ կատարել իր ազգային պարտականութիւնները: «Յստակ է, որ տարածաշրջանի իրավիճակը ծանր է եւ համազգային առումով մտահոգիչ են հայ համայնքներու դիմագրաւած լուրջ վտանգները: Սակայն յոյսով ենք, որ շուտով Լիբանանի քաղաքական ու տնտեսական ճգնաժամը կը հարթուի եւ մեզի համար կարեւորագոյն համարուող՝ Միջին Արեւելքի հայկական գաղութը կը շարունակէ իր ամբողջական գործունէութիւնը՝ ապահովելով նոր սերունդին հայեցի սպազան», ըսաւ Ընկ. Սարաֆեան: Ան մտահոգիչ համարեց Լիբանանէն արտագաղթի երեւոյթը, մանաւանդ երիտասարդներու պարագային, որովհետեւ այդպիսով կը տուժէ գաղութին կենսունակութիւնը, կը վտանգուի դպրոցներուն գոյութիւնը, մշակութային, քաղաքական եւ ընկերային գործունէութիւնը: «Այսուհանդերձ, Հնչակեան Կուսակցութեան մեր ընկերները միշտ կը մնան պատնէշի վրայ՝ կուսակցական, երիտասարդական եւ ընկերային գործունէութեամբ, ինչպէս նաեւ նպաստի եւ օգնութեան ծրագրերու առումով», հաւաստիացուց Ընկ. Սարաֆեան եւ զնահատեց բոլորին ջանքերը:

Պատասխանելով արտերկրի գաղութներէն լիբանանահայութեան աջակցելու մասին հարցումին, Ընկ. Սարաֆեան նշեց, որ զանազան շրջաններու մէջ կը շարունակուին աշխատանքները՝ մասնաւորաբար զօրակցելու «Արարատ» օրաթերթին, մշակութային եւ կրթական հաստատութիւններուն:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680

Տաւուշի Առաջնորդ Բագարատ Եպս. Գալստանեանի Հանդիսաւոր Պատարագով Մեկնարկուեցաւ Արեւմտեան Թեմի Պաշտօնական Հաստատման 95-Ամեակը



Հոս Անճելոսի եւ շրջակայքի եկեղեցասէր հայրերէն համար տօնական օր մըն էր Ապրիլ 23-ի Կիրակին: Արդարեւ խուռներամ հասարակութիւն մը փութացած էր Ս. Ղեւոնդ Մայր տնայր, ուր հանդիսաւոր կերպով պատարագ մատուցեց Հայաստանի սահմանամերձ Տաւուշի շրջանի առաջնորդ Գերշ. Տ. Բագարատ Եպս. Գալստանեան, առնթերակալութեամբ Տէր Խաթակ եւ Տէր Մանուկ քահանայ հայրերուն: Օրուան բազմաձայն պատարագի երգեցողութիւնը ներդաշնակօրէն կատարեց Շնորհալի երգչախումբը, ղեկավարութեամբ մայրաթիւր Ռաֆֆի Միքայէլեանի:

Պատարագի կիսուն՝ առաջնորդ Յովնան Սրբազան խորան բարձրանալով իր ուրախութիւնը յայտնեց որ այս օրը կը գոգաղիպի ԱՄՆ-ի արեւմտեան թեմի հաստատման 95-ամեակին առթիւ նախատեսուած շարք մը միջոցառումներու մեկնարկին: Այս ձեռնարկներէն մին՝ յառաջիկայ Կիրակի Սան Տիեկոյի մէջ նոր կառուցուած եկեղեցու պաշտօնական օծման արարողութիւնն է: Իսկ յառաջիկայ Մայիսի 1-ին՝ Սազրամենթի եկեղեցու օծումը:

Յովնան Սրբազան այս առթիւ ողջունեց օրուան հիւր եկեղեցականները յանձինս Արցախի նախկին առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեանի, որ դարձանումի համար քաղաքս կը գտնուի եւ Թեմիս նախկին երկարամեայ առաջնորդ՝ Գեր. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի, որ մեծ վաստակ ունեւորուած ունի Արեւմտեան թեմի կազմաւորման գործին մէջ եւ պատարագիչ Գերշ. Տ. Բագարատ Եպս. Գալստանեանի:

Պատմական այս իրադրութեան առթիւ ընթերցուեցաւ ամենայն հայոց հայրապետներ հոգելոյս Խրիմեան Հայրիկի կոնդակը 135 տարիներ առաջ, Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանեայց եկեղեցու թեմ հաստատելու եւ Գէորգ Ե. Կաթողիկոսի կոնդակը 95 տարի առաջ ԱՄՆ-ի արեւմտեան շրջանը առանձին թեմ հռչակելու կապակցութեամբ:

Այնուհետեւ, Յովնան Սրբազան սրտագին ջերմ խօսքերով, թեմական խորհուրդի եւ հաւատացեալներու անունով ողջունեց Տաւուշի շրջանի նուիրեալ առաջ-

նորդ Գերշ. Տ. Բագարատ եպիսկոպոսի ներկայութիւնը: Ան բարձր գնահատեց սահմանամերձ շրջաններու մեր հայրենակիցներուն հանդէպ իր ցուցաբերած կորովի կեցուածքն ու աջակցութիւնը տարբեր երեսներով:

Իր խօսքին մէջ Բագարատ սրբազան շնորհակալութիւն յայտնեց Յովնան Սրբազանի ոգեւորիչ ելոյթին եւ աջակցութեան համար: Ան՝ որպէս յիշատակ իրեն նուիրեց Կիւմրեցի երիտասարդ արուեստագետի մը կողմէ պատրաստուած եւ պատերազմի փամփուշտներով շինուած խաչ մը, որ խորհրդանշին է հոգեւոր ապարածի: Ապա յարեց. «...մենք իւրօրինակ ժամանակաշրջանի մէջ ենք ապրում, վախերով, ցաւերով, կորուստներով, նաեւ ձեռքբերումներով...: Այս բոլորի վրայ՝ աւելցած է նաեւ քովիտի համալսարանը, որ սպառնալիք մըն է մարդկութեան գլուխին կախուած...»: Սրբազանը Աւետարանէն մէջբերումներ կատարելով շեշտը դրաւ խաղաղութիւն եւ յաղթանակ առցածի վրայ եւ ընդգծեց «Խաղաղութիւնը կը ծնի միայն այն դէպքին՝ երբ դուն յաղթական ես, թէ անձնական եւ թէ՛ ամբողջական իմաստով: Քրիստոս իր խաչելութեամբ յաղթեց, ուստի մի վախնաք եւ քաջալերուեցէք: Մեզ կը հալածեն՝ մենք աւելի կ'ուժեղանանք: Մեզ կը փորձեն անջատել մեր հաւատքէն՝ մենք աւելի կ'ամրանանք: Սրբազանը ընդգծեց կարեւորութիւնը նաեւ սիրոյ եւ համերաշխութեան ու փոխադարձ յարգանքին մէջ եւ ըստ. «...յոյսը պէտք է լինի մեր ներքին ուժեղականութիւնը: Մենք կանք, ապրելու ենք յաղթանակի տեսիլքով: Յաղթանակով՝ խաղաղութիւն պէտք է լինի այդ է մեր միակ ճանապարհը»:

Բագարատ Սրբազան իր քարոզն աւարտեց ըսելով. «Վերադարձէք տուն: Այցելեցէք եւ տեսէք ձեր բոլոր ապրումների իրականութիւնը: Եկէք տուն...»:

Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն առաջնորդարանի «Համբար» սրահին մէջ: Ներկաները մօտէն ծանօթացան Բագարատ սրբազանին, որ սիրով պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն:

Բարի երթ եւ նորանոր յաջողութիւններ:

Նախագահ Պայտըն Բոլորեց

Շարունակուած էջ 1-էն

խութեան՝ նոր սահմանափակումներ ու խոչընդոտներ դնելով ընտրողներուն առջեւ: Այս երկու օրինագիծերու վաւերացումը ձախողեցաւ Դեմոկրատ օրէնսդիրներու միջեւ ծագած ներքին անհամաձայնութիւններուն պատճառով: Ժողովուրդի տարբեր հատուածներ այս ձախողութեան համար եւս կը մեղադրեն գործող նախագահին:

Նախագահ Պայտընի մամուլային կարեւոր մէկ մասը յատկացուած էր արտաքին քաղաքականութեան եւ յատկապէս Ուքրաինայի շուրջ տեղի ունեցող իրադարձութիւններուն: Ամերիկայի նախագահը մեղադրեց Ռուսաստանը, ըսելով թէ Ուքրաինայ սահմանին 100 հազարի հասնող զօրք կուտակելով նախագահ Փութին կը պատրաստուի յարձակելու Ուքրաինայ վրայ: Պայտըն շեշտեց, որ այս քայլը անընդունելի է Միացեալ Նահանգներուն համար եւ դէպքերու նման զարգացումի պարագային ան խոստացաւ, Արեւմուտքի իր դաշնակիցներուն հետ միասին, խիստ պատժամիջոցներ սահմանել Մոսկուայի դէմ եւ կաթուածահար ընել Ռուսաստանի տնտեսութիւնը: Ան սակայն փոքր պատուհան մը բացաւ ըսաւ թէ, մօտ ապագային Ուքրաինան ՆԱԹՕ-ի դաշինքի կազմէն ներս առնելու ծրագիրներ չկան: Այս պարագան Ռուսաստանի գլխաւոր պահանջներէն մին կը հանդիսանայ՝ զինուորական այդ դաշինքը հեռու պահելու համար իր սահ-

մաններէն:

Այսպիսով, Նախագահ Պայտըն իր պաշտօնավարման առաջին տարին բոլորեց ներքին ու արտաքին տագնապներու առկայութեան: Այս տարի տեղի պիտի ունենան նախագահական կիսաշրջանի գոնկրեսական ընտրութիւնները: Պատմականօրէն, Սպիտակ Տան բնակիչի կուսակցութիւնը կը կորսնցնէ նման ընտրութիւններուն: Մեծ է հաւանականութիւնը, որ յառաջիկայ Նոյեմբերին Ներկայացուցիչներու Տունը անցնի Հանրապետականներուն ձեռքը: Նոյնը կրնայ պատահիլ նաեւ Ծերակոյտէն ներս: Դէպքերու նման զարգացումի պարագային, Պայտընի վերջին երկու տարիները կրնան վերածուիլ «դժոխքի», քանի որ Հանրապետականները ընթացք պիտի չտան Նախագահի ծրագիրներուն՝ զինք մատնելով անգործութեան:

Պայտըն պէտք ունի յիշեցնելու ժողովուրդին՝ առաջին ամիսներու իր յաջողութիւններու մասին, երբ վաւերացուեցան ենթակառոյցներու նորոգութեան 2 քրիլիոն տոլարի օրինագիծը եւ նոյնքան հարուստ՝ տնտեսութեան խթանման օրինագիծը, որուն շնորհիւ իւրաքանչիւր Ամերիկացի ստացաւ 2000 տոլար կանխիկ գումար: Նախագահին առջեւ կայ շատ կարճ ժամանակ՝ համոզելու ժողովուրդին, որ յառաջիկայ ամիսներուն պիտի կարողանայ յաղթահարել ներքին ու արտաքին բոլոր մարտահրաւերները:

Գ. ԽՈՒՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Փոստութեան Ընկալման Ձեկոյցով

Շարունակուած էջ 1-էն

2017 թուականէն սկսեալ Հայաստանը վաստակած է 14 միաւոր եւ ընդհանուր թիւը հասցուցած է 49-ի: Հայաստանի մէջ ամբողջութեամբ են քաղաքացիական ազատութիւնները, այդ ճանապարհ կը

Յունուար 19-ին, Թուրքիոյ մէջ լոյս տեսնող հայկական «Ակօս» թերթի նախկին խմբագրութեան մօտ՝ ճիշդ աջտեղ, ուր 15 տարի առաջ սպանուեցաւ պոլսահայ մտաւորական, պարբերականի երջանկայիշատակ գլխաւոր խմբագիր Հրանտ Տինքը, տեղի ունեցաւ չիշատակի հանդիսութիւն մը:

«Արմէնփրէս»-ի փոխանցմամբ, ամէն տարուան պէս՝ այս տարի եւս ելոյթ ունեցաւ մտաւորականին կիներ՝ Ռաքէլ Տինքը, որ նշեց. «15 տարիներ անցած են այն օրէն, երբ թիկունքէդ արձակուած կրակոցները քեզ մեզմէ բաժնեցին: Ձայնդ դեռ ականջներուս մէջ է: Ամէն անգամ, երբ կը պատմէիր, թէ ինչ ըրած են քու ժողովուրդիդ հետ, քեզ կը մեղադրէին դաւաճանութեան, թիկունքէն հարուածելու մէջ... Միշտ կ'ըսէիր. «Մի-րեցէ՛ք ձեր թշնամիները, լաւութիւն ըրէ՛ք ձեզ ատողներուն, լաւութիւն ըրէ՛ք ձեզ անհիծողներուն, աղօթեցէ՛ք վիրաւորողներուն համար»: Կ'աղօթեմ»:

Իր ելոյթին մէջ Ռաքէլ Տինքը անդրադարձաւ Թուրքիոյ մէջ վերջին տարիներուն սաստկացած մարդու իրաւունքներու ոտնահարումներուն, ընդդիմադիր եւ ոչ իշխանահաստիք գործիչները լռեցնելու փորձերուն եւ զանոնք ձերբակալելու փաստերուն:

«Քեզ հողին յանձնելէն ի վեր, այստեղէն բարձրացող ըմբոստութեան եւ մերժումի ձայնը չլռեց եւ պիտի չլռէ: Բանուորները, կանայք, ուսանողները, գիւղացիները կրկին պայքարի մէջ են: Օր մը դարձեալ պիտի միաւորուին եւ դառնան հեղեղ», - նշեց մտաւորականին կիներ:

Արարողութեան ներկայ էին Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլանը, Տինքի ընկերներն ու գաղափարակիցները, մտաւորականներ եւ ցուցարարներ: «Մենք այստեղ ենք եւ պիտի շարունակենք պայքարիլ արդարութեան համար», - նշեցին Տինքի ընկերները:

Պոլսահայ մտաւորական Հրանտ Տինքը սպանուեցաւ 2007 թուականի յունուար 19-ին՝ իր իսկ հիմնադրած «Ակօս» պարբերականի խմբագրութեան առջեւ՝ դաւադրաբար թիկունքէն արձակած կրակոցներով: Կրակողը Թուրք ազգայնական Օկիւն Սամասթն էր, որ յանցանքը իրականացնելու ժամանակ ընդամէնը 17 տարեկան էր: Դատարանը գաջն դատապարտած է 22 տարուայ բանտարկութեան: Սպանութեան կազմակերպիչը՝ Եասին Հայալը, 2012 թուականի յունուար 17-ին դատապարտուած է ցմահ բանտարկութեան: Յանցագործութեան իրական շարժառիթներն ու պատասխանատուները ցարդ յայտնի չեն:

Ռաքէլ Տինքի Ելոյթը «Ձայնդ կը հնչէ մեր ականջներուն մէջ. Կը յարգենք մեր խոստումը»

Երբ հանդիսավարը նշեց Ռաքէլ Տինքի անունը ժողովուրդը երկարատեւ ծափահարութիւններով դիմաւորեց զինք: Ան յիշեց անցնող 15 տարիներուն իր կողքին եղող եւ այսօր մահուան, հիւանդութեան, կամ ազատագրկամ պայմաններուն մէջ ըլլալուն բացակայողները: Ողջունուեցաւ նաեւ Շարաքօրեայ Մայրերու ներկայութիւնը այս միջոցառման: Տիկին Տինքին ջութակի ուղղեալ խօսքերը ստորեւ:

15 տարիներ անցան այն օրէն, երբ դաւաճան փամփուռները արձակուեցան կոնակէդ եւ քեզ խլեց մեզմէ: Ձայնդ դեռ կը հնչէ մեր ականջներուն մէջ: Ամէն անգամ, որ պատմեցիր ազգիդ դէմ կատարուածները, քեզ մեղադրեցին դաւաճանութեամբ, մեղադրեցին կռնակէն դաշունահարութեամբ: Մինչդեռ...

«Միւրեցէ՛ք ձեր թշնամիները, բարիք գործեցէ՛ք ձեզի ատողներուն, օրհնեցէ՛ք ձեզի անհիծողները, աղօթեցէ՛ք, ձեզի անարգողներուն համար» կ'ըսես Տէր Աստուած: Կ'աղօթեմ ես...:

Անցաւ 15 տարի: 15 բացակայող տարի: Այդ օրուայ տղաքը, Նազըմի նման կը մեծնան: Այն բոլոր խնդիրները, որոնք չենք

կրնար լուծել, կը բեռնենք անոնց ուսերուն վրայ: Եւս առաւել, կարծես խնդիրն տէրն ու պատճառը մենք չենք, երեխաներն ու երիտասարդները ռազմաճակատ կը քշենք:

Մինչդեռ, եթէ մեր արիւնոտ ժառանգութիւնը գոյութիւն չունենայ, աշխարհի վրայ գտնուող իրենց այլ տարեկիցներուն հետ, կրնան երազել եւ իրականացնել այլ ապագայ մը: Արդէն պիտի ունենան բաւականաչափ հարցեր: Դեռ պիտի տեսնենք շատ երկրաշարժներ: Եկէ՛ք բանանք անցեալի հազարամեակը, որպէսզի ցաւալի հողիները ազատ մնան: Ճշմարտութիւնը, այն ամուր ժայռն է, որուն վրայ պիտի կառուցենք մեր տունը: Ճշմարտութիւնը ամուր ժայռ մըն է: Իրենց ապագայի վախերուն



եւ երազներուն հետ, չափահասներու ցաւալի ժառանգութեան միջեւ կը սեղմուին տղաքը: Կամ իրենք իրենց, եւ կամ ուրիշներուն կը վնասեն: Մինչդեռ եթէ քով քովի գան ու ջուրի նման հոսին, ոչինչ կրնայ դիմադրել իրենց: Այս աշխարհը ինչ բռնակալներ, ինչ հալածանքներ տեսաւ: Օրը հասաւ, բոլորը ոչնչացան: Ժամանակը փոխուեցաւ: Ինչ սուլթաններ, ինչ թագաւորներ, ինչ արքաներ կործանեցան: Դարձեալ պիտի կործանին:

Գիւղին մէջ, աղբիւրին գլուխը, կամուրջին գլուխը, իր գէնքով կայնող եւ անցող-գացողէն բռնի դրամ առնողին աւազակ կ'ըսէին: Յետոյ գէնքերը պահեցին թուղթի կտորներուն ետեւ: Իշխանութիւն անուանեցին գաջն: Գործընկերութիւն կոչեցին: Թուղթերուն վրայ գրուած էին, իրենց սահմանաւորած օրէնքները: Մենք հաւատարմեցինք, դո՛ւք մի հաւատարմ տղա՛ք: Ո՛րք մէկուն չպատկանողին, «Իմ է՛» ըսողին մի՛ հաւատարմ: Բոլորին պատկանողին «Իմ է՛» ըսողին մի՛ հաւատարմ:

Այս երկրին մէջ բարձրացող ամէն տեսակ բողոքը, արտաքին ոչժեր կոչեցին: Ճիշդ է: Ձեր ներսը, անոնց արտաքինն է: Երբ ձեր սիրտը կ'այրէր, անոնք «դուրսը մուխ կայ» ըսին եւ պատուհանները փակեցին:

«Կէզի» ընդդիմութիւններու ընթացքին, երիտասարդները նախ իրենց պարած քաղաքը պահպանելու ջանացին, յետոյ իրենց հալածուող ընկերները պաշտպանելու համար բազմացան: Այս ալ «արտաքին ոչժ» կոչեցին, ահաբեկչութիւն կոչեցին, սա կոչեցին, նա կոչեցին: Մեր զաւակներուն աչքերը հանուեցան, կազով, թուրուր ջուրերով ողողուեցան: Տղաքը սպանուեցան: Ո՞վ էր ահաբեկիչը: Մինչդեռ շատ հազուադէպ էր, այսքան երիտասարդին մէկտեղուիլն ու իրենց շրջապատը այդքան քիչ կտորել, թափելը:

Հիմա իրենց գրած թուղթի կտորներով, իբր թէ կը դատաւարեն: Կարելի՞ք բան է:

Ո՞վ տիրակալներ, իսկապէս արդա՞ր էք ձեր որոշումին մէջ: Ճիշդ կը դատէ՞ք մարդիկը: Ո՛չ:

Անարդարութիւնը միշտ կայ՝ ձեր ծրագիրներուն մէջ, ձեր ձեռքերը բռնակալութիւն կը ցրուեն աշխարհին: Զուժա՛կս...

Ամէն անգամ, որ քեզի ահաբեկչութեան մասին հարցուցին, անհիծեցիր: Իրեն դիմաց ոչժի ահաբեկչութիւնն ալ դրիր: Այդ ալ անհիծեցիր: Երբ ասիկա կ'ըսէիր, նկատի ունէիր, պետական իշխանութիւններու ապօրինի գործե-

րը: Աշխարհի վրայ բազում անգամ կատարուեցան ահաբեկչական արարքներ ու կը շարունակուին կատարուիլ: Քեզմէ առաջ եւ նաեւ քեզմէ յետոյ... Ո՞վ որ ոչժը ձեռքը կ'առնէ, կը սկսի հալածանքի: Ո՞վ, որո՞ւ կրնայ մեղադրել: Ժողովուրդն է սուրժողը: Իւրաքանչիւր 19 Յունուարին, որ ոգեկոչեցինք քեզ, ջանացինք ոգեկոչել եւ չիշեցնել նաեւ այլ դաժանութիւնները: Խորհեցանք, որ երբ նկարները քով քովի շարուին, երբ այդ ցաւալի ալպոմին միասին վերանայինք, թերեւս բացէ ի բաց կը յայտնուի բուն ոճրագործը:

Կիպրոսի մէջ, ուրիշ լրագրողի մը՝ Գուլթուր Ատալին ետեւէն ինչպէ՞ս ինկեր են, տեսա՞ր: Այս հողերուն վրայ գոյութիւն ունեցող ահաբեկչութեան բուն ակը երբ կը յայտնէինք, սխալ կ'ըսէինք:

Աստուածաշունչը կ'ըսէ. «Խաւարի անպտուղ գործերուն ընկեր մի՛ դառնաք: Ընդհակառակը, բացայայտեցէ՛ք զանոնք»:

Մեր բարեկամները տարիներ շարունակ բանտերու մէջ կը սպասցնեն: Մին կ'արձակեն, միւսը կը բանտարկեն: Անհետեւ թափառներով, սուտերով: Այլեւս պատրուակներ անգամ չեն յօրիներ, «այդպէս պէտք է» կ'ըսեն ու կը բանտարկեն: Երկրին ամէն տեսակ հարցին ճար փնտռող երիտասարդ փաստաբանները բանտարկեցին, լրագրողները բանտարկեցին, ինչպէս՝ Օսմանը, Պիրճանը...:

«Ես քիւրտ եմ» ըսող բոլոր քաղաքական գործիչները բանտարկեցին: Կ'ուզեն, որ գէնքերը խօսին, մարդիկ չխօսին: Նորէն կը պարտադրեն իրենց ծանօթ լեզուն:

Բայց մենք յուսալքող չըլլանք:

Երբ քեզի կը թաղէինք, այստեղէն բարձրացող ըմբոստութեան եւ բողոքի ձայնը չդադրեցաւ, պիտի չդադրի: Բանուորները, կիները, աշակերտները, գիւղերը կը շարունակեն դիմադրել: Անոնք կը պահպանեն բոլորին պատկանողը, կը պահպանեն գաջն, ո՛րք մէկուն չպատկանողը «Իմ է՛» ըսողին: Օր մը, կրկին պիտի միասնան ու պիտի հոսին ջրհեղեղ դառնալով:

Ոմանք վշտացած են: «Ո՞ւր էիք, երբ նոյն բաները մենք կ'ապրէինք» կ'ըսեն: Մենք չուզեցինք այդպէս ըլլալ, ջանացինք իրենց ձայնը մեր ձայնով գորացնել, որքան որ կըրցանք: Ու դեռ պիտի ջանանք:

Ձայնդ կը հնչէ մեր ականջներուն մէջ: Կը յարգենք մեր խոստումը

Մեծ Ձեռագրագետը Նորայր Արքեպիսկոպոս Պողարեան Ձեռագրագետ Անգուղական Բանասերը 1904-1996

«Պողարեան Եպիսկոպոսի 11 հատորները վստահելի միջոց են պարունակում հայերենի պատմական հնչյունաբանություն, պատմական բառագիտություն և քերականական կառուցուածքի պատմական հետազոտութեան համար»

Դոկտ. Վազգէն Յամազասպեան

ԴՊԿՏ. ՉԱԻՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Քսանհիմնագամեակ

Քսանհիմնագամեակ տարիներ անցած են 20-րդ դարու կարկառուն և հայ հոգեւորականութեան առաջատար գիտնական-բանասէր Նորայր Արքեպիսկոպոս Պողարեանի վախճանում: Երջանկալի շատակ Սրբազանը իր բովանդակ կեանքը նուիրեց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանուց, և յատկապէս Ձեռագրատան, ուր 4000 հայերէն ձեռագիրներ ի պահ կը մնան դարերէ ի վեր: Նորայր Սրբազան եղաւ բոլոր ձեռագիրներուն իսկական հայրը՝ զանոնք տանեակ մը մեծադիր հատորներու մէջ կեանքի կոչելով, ցուցակագրելով և հրատարակելով:

Որպէս իսկական ուխտապահ միաբան, աննմանը և օրինակելին եղաւ իր ժամանակակից հոգեւորականներուն մէջ, լռակեաց, իմաստուն և ամենէն արդիւնալիցը՝ Երուսաղէմի բովանդակ պատմութեան մէջ, որուն աշխատանքը պտղալից դարձաւ միակ անձի մը հաւատաւոր առաքելութեամբ, քննախոյզ, հեռու և բոլորովին անյարիր վանքի անիմաստ տագնապներէն: Իրմէ առաջ և իրմէ ետք ոչ մէկ միաբան պիտի կատարէր ձեռագիր մատենաներու այդ հակաջ աշխատանքը: Ինք եղաւ առաջինն ու վերջինը որպէս պահապան անխոս գրչագիրներուն որոնք լեզու ելան ու յայտնուեցան աշխարհին:

Երկու ձեռագիրներ՝ Աւետարան մը և Գանձարան մը մեծ հայր Յակոբ Արզումանեան 1925-ին էվէրէկէն Երուսաղէմ ուխտի երթալով նուիրած է Երուսաղէմի Ձեռագրատան որոնք 3459/20 համարներուն ներքեւ ցուցակագրուած են: Այսօր ի ձեռին ունիմ Երջանկալի շատակ Եղիշէ Պատրիարք Դուրեանի 11 Ապրիլ 1925 թուակիր նամակը ուղղուած մեծ հօրս, ուր կ'ըսուի «Շնորհակալութեամբ ընդունեցինք Ձեր սիրելութեան կողմէ Ս. Աթոռոյ Մատենադարանին նուիրուած երկու կտոր ձեռագիր մատենաները, ԱԻԵՏԱՐԱՆ մը, և ԳԱՆՁԱՐԱՆ մը: Կը նուիրենք Ձեր Սիրելութեան մեր հայրական ջերմագին օրհնութիւնները և կը մայրթենք կատարեալ յաջողութիւն ի գործս բարիս: Ողջունիւ Սիրոյ, Աղօթարար՝ Պատրիարք Երուսաղէմի Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան: Նորայր Սրբազանի Յուցակներուն մէջ կը գտնուին այդ Երկարակեաց, բարեկրօն ու գիտնական այս հոգեւորականը իր 84 տարեկանին, 1988 թուին, առանց որեւէ հանդիսութեան կը նշէր իր քահանայական ձեռնադրութեան 60-ամեակը, կատարելագործելէ ետք հակաջ աշխատանք Երուսաղէմի հազարաւոր ձեռագիրները պրպտելով, և չարատեւ ուսուցանելով Ընծայարանի ուսանողութեան՝ դաստիարակելով հոգեւորականներու շարք մը սերունդներ: Նորայր Սրբազան ապրեցաւ ինը բեղմնաւոր և առողջ տարիներ ևս ու վախճանեցաւ մերձ 93 տարեկանին՝ 1966 թուի դեկտեմբեր 19-ին:

Այնթապէն Երուսաղէմ


Ծնած Այնթապ 1904 յունուար 17-ին, Սրբազանը որդին էր Գարեգին Աւագ Քհնյ. Պողարեանի, Երուսաղէմ ընդունուած որպէս ժառանգաւոր Եղիշէ Դուրեան մեծանուն Պատրիարքի օրով, որմէ ևս կը ստանար սարկաւազի և կուսակրօն քահանայի կարգերը, Պատրիարքի շունչին տակ և Բաբգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեանի ուսուցչութեան ներքեւ աւարտելէ ետք իր ուսման շրջանը: 1928 թուին Նորայր Պողարեան և Տիրան Ներսոյեան Այնթապցի գոյգը, Գարեգին Պողարեան և Ներսէս Թափուքեան Աւագ Քահանաներու արժանաւոր որդիները, կուսակրօն քահանայի կոչում և օծում կը ստանային Դուրեան Պատրիարքէն: Երկուքը շուտով Անգլիա կ'ուղեւորէին Պատրիարքի յանձնարարութեամբ աստուածաբանական բարձրագոյն ուսում ստանալու և ապա վանք վերադառնալու և լծուելու իրենց առաքելութեան: Ապագան հաստատեց որ Նորայր և Տիրան Արքեպիսկոպոսներ հանդիսացան անցեալ դարու առաջնակարգ բարձրաստիճան հայ հոգեւորականները:

Նորայր Եպիսկոպոս

Երբ նոր ստացեր էր վարդապետական աստիճանները, Նորայր վարդապետ 1935 թուին կը հրատարակէր Կիւլիկոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքէն որպէս տեսուչ՝ յաջորդելով Կիւլիկոյ վերատեսուչ Շահէ Արքեպս. Գասպարեանին, հինգ տարուան շրջանի համար: Երուսաղէմ վերադարձին, ձեռագրատան իր բեղմնաւոր տարիներու նուիրեալ աշխատանքէն ետք 1951 թուին, Միաբանական Ժողովի ընտրութեամբ Ս. էջմիածին կը մեկնէր Եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալու Ամենայն Հայոց Տ.Տ. Գէորգ Չ. Կաթողիկոսէն, օծակից ունենալով Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանը, Սուրէն Քեմհաճեան, և Սահակ Տ. Յովհաննիսեան Եպիսկոպոսները:

Ձեռագրագետ Հեղինակը

Նորայր Եպիսկոպոսի մնացուն և արդիւնաշատ աշխատանքը Երուսաղէմի Ս. Թորոս Ձեռագրատան հայերէն ձեռագիրներու մանրակրկիտ ուսումնասիրութիւնը եղաւ որ յանգեցաւ «Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» կոչուած 11 մեծագիր հատորներու հրատարակութեանց: Սրբազանը սկսաւ գանոնք հրատարակութեան յանձնել 1953 թուականէն սկսեալ Բ հատորով որ շարունակութիւնն էր Արտաւազդ Արքեպիսկոպոս Սիւրմէեանի հատորին՝ հրատարակուած Ս. Ղազարի Միթարեան տպարանէն 1948-ին, որ կը բովանդակէր թիւ 1-140 ձեռագիրները: Նորայր Եպիսկոպոսի Բ հատորը կը ցուցակագրէր թիւ 141-240 ձեռագիրները: Յաջորդ հատոր մը 1960-ին կ'ընդգրկէր 560 յաւելեալ ձեռագիրներ ևս լրացնելով 700 գրչագիրներու ցուցակագրութիւնները: Նորայր Եպիսկոպոս Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսէն գնահատուեցաւ և 1973-ին արքե-



պիսկոպոսութեան բարձրացաւ: Ձեռագրատան տեսչութիւնը վարեց 43 տարիներ խղճամիտ և բազմարդիւն կերպով, «Յուցակներու» 11 յաջորդական հատորներու հրատարակութեամբ, նախ 3000 և ապա 1000 մնացեալ ձեռագիր մատենաները նկարագրելով բոլոր հատորներուն մէջ, անմնացորդ աշխատութեամբ և անհատնում համբերութեամբ: Իսկական գիտնականի յաւերժական արդիւնքը յանձնելով գալիք սերունդներուն Նորայր Արքեպիսկոպոս Պողարեան կը հանդիսանայ գլուխը 20-րդ դարու հայ բանասիրութեան:

Հատոր Բ

Գաղափար մը տուած ըլլալու համար կատարուած աշխատանքի մասին, նախ կը նշեմ 1953-ի իր Բ հատորին մէջ պարունակուած 100 ձեռագիրներէն մի քանի նմոշներ, և ապա՝ 1971-ին հրատարակած իր Ե մեծագիր հատորէն: Ասոնցմէ առաջինը սրբազան հեղինակը յատուկ մակագրութեամբ տողերս գրողին նուիրած էր երբ Արզումանեան իր առաջին այցելութեամբ Երուսաղէմ կ'այցելէր 1955-ի Սուրբ Ծնունդին: Յիշեալ հարիւր ձեռագիրներուն մէջ աչքառու կը դառնային հայ պատմիչներու բնագիրներէն ոմանք, շարք մը մեկնութիւններ, ճառընտիրներ, Դատաստանագիրքի տարբերակներ, և Եւսեբիոս Կեսարացիի Պատմութիւն Եկեղեցւոյ գիրքին թարգմանութիւնը:

Յատկաշնական է որ անոնցմէ թիւ 230 Ժողովածոյ Պատմական Գրոց ձեռագիրը Երուսաղէմի Ս. Փրկիչ Վանքին մէջ ժե-րդ դարուն զրուած ձեռագիր մըն է որ կը պարունակէ Ագաթանգեղոսի, Մովսէս Խորենացիի, Փաւստոս Բիւզանդի, և Եւսեբիոսի բնագիրները: Իսկ թիւ 216 ձեռագիրը՝ Գրիգոր Տաթևացիի Հարցմանց Գիրքը կը պարունակէ, գրուած Կ. Պոլիս 1666 թուին: Նոյն հատորին մէջ կ'երեւի թիւ 173 հին ճառընտիրը՝ գրուած Արջըրայ գիւղին

մէջ 1512 թուականին: Միթար Գօշի Դատաստանագիրքէն օրինակ մը, գրուած Ստամպոլ 1772-ին, և Ժ դարու հայ պատմիչ Թովմա Արծրունիի Պատմութիւն Տանն Արծրունեաց պատմագրութեանց տարբերակ մը, լրիւ բովանդակութեամբ 225 էջերով, կաշեկազմ որուն գրութեան վայրն ու թուականը կը պակսին:

Հատոր Հինգերորդ

1971 թուին հրատարակուած Յուցակ-ին հինգերորդ հատորի 604 էջերուն մէջ Նորայր Արքեպիսկոպոս արձանագրած է մինչև թիւ 1700 ձեռագիրը, ցուցակագրելով 335 մատենաներ, ընդ որս 80 շարականներ, 81 ժողովածուներ, և 3 Աւետարաններ, 85 մանրանկարներու նմանահանութիւններով: Բանասէր Յարութիւն Քիւրտեան որ գրախօսած է այս հատորը, կ'ըսէ թէ «ձեռագիրները մեծ մասամբ 18-րդ դարէն են, և թիւ 1620-ը՝ շարական մըն է Սարգիս Պիծակէ, ոսկեգօծ: Չորս Պիծակեան ձեռագիրներ կան այս հատորին մէջ»: Բանասէր Վազգէն Համազասպեանի վկայութեամբ «Ձեռագրերի սոյն 11 հատորները վստահելի նիւթ են պարունակում հայերէնի պատմական հնչիւնաբանութեան, պատմական բառագիտութեան և քերականական կառուցուածքի պատմական հետազոտութեան համար»:

Պողարեան Սրբազանի Այլ Երկերը

Առանձին արժէքաւոր գիրքերու հեղինակ եղած է նաեւ Նորայր Արքեպիսկոպոս: Յովհաննէս Թլկուրանցիի Տաղաղիքը 1958, Հայ Գրողներ Ե-Ժ դար, 1971, Գրիգոր Ակներցիի Թաթարաց Պատմութիւնը 1974, Կնիք Հաւատոյ հատորին քննական վերահրատարակութիւնը 1974, Կանոնագիտութիւն և կրօնագիտութիւն 1992, Վանատուր և Հայ Եկեղեցւոյ Հա-

Շար.ը էջ 15

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services
From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...
Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

Սէուտական Արաբիան Կ'ողջունէ ԶԶ-Ն. «Dubai Expo 2020»-ի Շրջանակին Մէջ Երկու Երկիրները Հանդէս Եկած Են Մշակութային Ծրագրով



Սէուտական Արաբիոյ Թագաւորութիւնը կ'ողջունէ Հայաստանը. հայերէնով, անգլերէնով ու արաբերէնով այս գրառմամբ «Dubai Expo 2020» համաշխարհային ցուցահանդէսի այցելուները դիմաւորած են Սէուտական Արաբիոյ տաղաւարին մէջ: «Dubai Expo 2020» համաշխարհային ցուցահանդէսի շրջանակին մէջ, 20 Յունուարին, Հայաստանի Հանրապետութիւնը Սէուտական Արաբիոյ Թագաւորութեան հետ հանդէս եկած են համատեղ մշակութային ծրագրով: Համատեղ համերգային ծրագրով հանդէս գալու առաջարկը եղած է Հայաստանի տաղաւարին կողմէ: Համերգն տեղի ունեցած է Սէուտական Արաբիոյ տաղաւարին մէջ, որն ամենամեծն է ու ամենաշատ այցելուները կ'ապահովէ «Dubai Expo 2020»-ի ծիրին մէջ:

«Dubai Expo 2020»-ին Հայաստանի տաղաւարի տնօրէն Լիլիթ Յակոբեան նշեց, որ համատեղ համերգային ծրագրով հանդէս գալու Հայաստանի տաղաւարի ղեկավարութեան առաջարկը մեծ ուրախութեամբ ընդունուած է Սէուտական Արաբիոյ տաղաւարին մէջ:

«Նախ ես կը փափաքէի նշել, որ մեր երկու պետութիւններուն համար կը բացուի նոր էջ: Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանը նախորդ տարուան Հոկտեմբերին աշխատանքային այցելութեամբ եղած է Սէուտական Արաբիոյ Թագաւորութեան մէջ: Եւ ահա, «Dubai Expo 2020» հարթակը հիանալի

հնարաւորութիւն է ցոյց տալու մեր երկիրներուն միջեւ կապը՝ օգտագործելով երկու ժողովուրդներուն մշակութային ներուժը», ըսաւ Լիլիթ Յակոբեանը:

Երկու երկիրներու համատեղ համերգային ծրագրին մէջ Հայաստանին ելոյթ ունեցած է երաժշտահան Միհրան Գուրուսեանը՝ Գուրուսեան, «Շուշիկի Պենտ»-ի վոքալիսթներուն հետ, իսկ Սէուտական Արաբիայէն հանդէս եկած է «Saudi Folk Group»-ը:

«Մեր երաժշտական աւանդոյթները ունին հարուստ արմատներ, որոնք կը ծառայեն որպէս ոգեշնչման աղբիւր: Յատկապէս կարեւոր էր նաեւ ցոյց տալ, թէ ինչպէս երաժշտութիւնը կը միաւորէ մեզ բոլորս: Ի վերջոյ, մենք կը փափաքէինք աշակցիլ «Dubai Expo 2020»-ի հիմնական գաղափարին՝ միտքերու միաւորում, ապագայի ստեղծում», ըսաւ Լիլիթ Յակոբեանը:

Յակոբեան ընդգծեց, որ համերգը մեծ ուշադրութեան արժանացած է «Dubai Expo 2020» ցուցահանդէսի այցելուներուն կողմէ: Յիշեցնենք, որ 1 Հոկտեմբեր 2021-ին Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ մեկնարկած է «Տուպայ Էքսպօ 2020» համաշխարհային ցուցահանդէսը, որուն կը մասնակցի 192 երկիր, ընդ որում Հայաստանը: Ցուցահանդէսի շրջանակին մէջ Հայաստանի օրը նախատեսուած է 30 Յունուար 2022 թուականին:

Շուէտի Կառավարական Գործակալութիւնը Հրաժարած Է Դրամաշնորհներ Տրամադրել Երկրին Մէջ Գործունէութիւն Ծաւալող Ատրպէյճանական Երկու Կազմակերպութեան

17 Յունուարին շուէտական «Blankspot» պարբերականին մէջ հրատարակուած է շուէտ լրագրող Ռասմուս Քանպեքի յօդուածը, որուն մէջ նշուած է, որ Շուէտի կառավարական «Երիտասարդութեան եւ քաղաքացիական հարցերով շուէտական գործակալութիւնը» հրաժարած է դրամաշնորհներ տրամադրել Շուէտի մէջ գործունէութիւն ծաւալող «Ատրպէյճանական գոնկրէս» եւ «Ատրպէյճանի ազգային միութիւն» համայնքային կազմակերպութիւններուն (Նշեալ երկու կազմակերպութիւնները տարիներ շարունակ դրամաշնորհներ ստացած են «Երիտասարդութեան եւ քաղաքացիական հարցերով շուէտական գործակալութեան» կողմէ: Միայն 2020-2021 թուականներու ընթացքին կազմակերպութիւնը ստացած է 709.580 շուէտական կրօն (շուրջ 70 հազար եւրօ):

Կայացուած որոշման պատճառաբանութեան մէջ ըսուած է, որ այդ երկու կազմակերպութիւնները յարաբերութիւններ ունին Ատրպէյճանի բռնատիրական վարչակարգին հետ, որ կը հակասէ ժողովրդավարութեան սկզբունքներուն:

Շուէտի կառավարական «Երիտասարդութեան եւ քաղաքացիական հարցերով շուէտական գործակալութեան» կատարած ուսումնասիրութիւնը բացայայտած է, որ «հաւանական են որոշակի կապերու առկայութիւն «Ատրպէյճանի ազգային միութեան» եւ թրքական «Գորշ գայլեր»ու եւ/կամ Ատրպէյճանի բռնատիրական վարչակարգին միջեւ»: Որոշման հիմք հանդիսացած են ընկերային ցանցերու մէջ կատարուած հրապարակումները եւ 2020-ի Հոկտեմբերին Սթոքհոլմի մէջ ատրպէյճանական համայնքին կազմակերպած ցոյցերը, որոնք աշակցութիւն կը յայտնէին Ատրպէյճանին՝ Լեռնային Ղարաբաղի մէջ ընթացող պատերազմին:

Հրապարակուած է նաեւ «Ատրպէյճանի ազգային միութեան» մեկնաբանութիւնը, որ հերքած է կապը «Գորշ գայլեր»ուն հետ՝ նշելով, որ կազմակերպութիւնը երբեք որեւէ յարաբերութիւն չէ ունեցած, այսպէս կոչուած, «Գորշ գայլեր»ու հետ: Աւելին, կազմակերպութիւնը յայտնած է, որ իրենց անդամներուն շուրջ 60%-ը Ատրպէյճանի մէջ կը համարուի անցանկալի անձ, քանի որ ընդդիմադիր հայեացքներ ունի Ատրպէյճանի ներկայիս կառավարութեան հանդէպ: Յօդուածին մէջ որոշակի մանրամասնութիւններ կայացուած են նաեւ Շուէտի մէջ «Գորշ գայլեր»ու գործունէութեան վերաբերեալ: Մասնաւորապէս, վարկած կայ, որ «Գորշ գայլեր»ու ներկայացուցիչները ներգրուած եղած են 2017-ին Շուէտի մէջ քիւրտ ցուցարարի գնդակահարութեան գործին մէջ: Շուէտի «Կանաչներ»ու կուսակցութեան անդամ, ծագումով թուրք Մեմետ Քափլանը, որ կը զբաղեցնէ Շուէտի բնակարանաշինութեան եւ քաղաքային զարգացման նա-

խարարի պաշտօնը, ստիպուած եղած է 2016-ին հրաժարիլ իր պաշտօնէն՝ Շուէտի մէջ «Գորշ գայլեր»ու ղեկավարներուն հետ ընթրիքի լուսանկարներու հրապարակման պատճառով: (Բարձրացուած աղմուկէն յետոյ նախարարը հանդէս եկած է պարզաբանմամբ՝ նշելով, որ չի կրնար վերահսկել, թէ ովքեր կը մասնակցին ընթրիքին, որուն ներկայ եղած է նաեւ ինք: Այդուամենայնիւ, Քափլան ստիպուած եղած է թողել նախարարի պաշտօնը):

Շուէտի մէջ տեղի ունեցած տարբեր դէպքեր կը փաստեն, որ ծայրայեղ աջակողմեան, հակաբեկչական այդ կազմակերպութեան թիրախին են Շուէտի մէջ բնակող քիւրտերը եւ քրտական կազմակերպութիւնները: Յատկանշական է նաեւ, որ 2018-ին Թուրքիոյ մէջ տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն ժամանակ Շուէտի մէջ բնակող Թուրքիոյ 841 քաղաքացի քուէարկած է Թուրքիոյ մէջ գործող «Ազգայնական շարժում» կուսակցութեան օգտին, որ կը համարուի «Գորշ գայլեր»ու անմիջական հովանաւորը եւ այդ կառույցին քաղաքական թեւը: Շուէտական կողմին կատարած ուսումնասիրութեան շնորհիւ նշուած է, որ «Ատրպէյճանի ազգային միութիւն» կազմակերպութեան գանձապահ Թէյմուր Էմինպէյլին թրքական աշխարհի վերամիաւորման ջատագով համարուող «Ազգային շարժման միութեան» (Milli Herakatçilar Birliyi) հիմնադիր անդամ է: Աւելին, կարծիք կայ, որ Էմինպէյլին կը հանդիսանայ ատրպէյճանական ընդդիմութեան անդամ, որ ստիպուած լքած է Ատրպէյճանը 1993-ին եւ կապեր ունեցած է Ատրպէյճանի նախագահ Ապուլֆազ Էլչիպէյլի հետ: Էմինպէյլիի ֆէյսպօքեան էջի յետնապատկերին պատկերուած է երկու երեխայ, որոնք կը կրեն Էլչիպէյլի դիմանկարով շապիկներ:

Յօդուածին մէջ նշուած է նաեւ, որ «Ատրպէյճանի ազգային միութիւն» համայնքային կազմակերպութիւնը Սթոքհոլմի մէջ ցոյցեր կազմակերպած է նաեւ 2016-ի Ապրիլին Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցած իբրեւ միջադէպ: Հանրահաւաքի ժամանակ ելոյթ ունեցած է Շուէտի «Թրքական ֆետերացիա» կազմակերպութեան փոխնախագահ Պարպարոս Լէյլանին՝ յորդորելով. «Վե՛ր կեցէք, թուրքեր: Հայ շուները պէտք է զգուշանան: Մա՛հ հայ շուներուն»: Այս ելոյթէն յետոյ բողոք ներկայացուած է շուէտական ոստիկանութիւն, որմէ յետոյ Լէյլանին ստիպուած եղած է թողել պաշտօնը: Այդ դէպքը տեղի ունեցած է շուէտ նախարար Քափլանի հետ ընթրիքի լուսանկարներու հրատարակումէն օրեր առաջ: Ընթրիքի լուսանկարներուն մէջ կ'երեւի, որ շուէտ նախարարին հետ միեւնոյն սեղանին շուրջ եղած է նաեւ Լէյլանին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

Սրտի Խօսք Ի Յիշատակ Անասան Գաղափարական Երախտաւորին

Խօսքը՝ նորոգ հանգուցեալ՝ ճարտարագէտ ընկեր Սարգիս Զգուշեանի մասին է, որուն կուսակցական եւ հասարակական կեանքը՝ եղաւ համակ նուիրում եւ քրտնաթոր աշխատանք՝ վասն լինելութեան կիրիկեան կրթամշակութային հաստատութեանց բարօրութեան ո բարգաւաճման:



Այնթապցի համեստ ընտանիքի գաւակ՝ ապագայ ճարտարագէտ, կուսակցական եւ հասարակական գործիչը լոյս աշխարհ եկաւ, Հալլայի Տաւուտիէ արուարձանի բարձունքին ո թոթովեց մայրենին՝ անոր գառիթափին կառուցուած վարդանեան վարժարանին մէջ: Վեցամեայ կրթութեան աւրնթեր, հագաւ դպրի շապիկն ու ձայնակցեցաւ նոյնանուն Սուրբ Վարդան Մատոռան դպրացոյցասին ու քանի որ շատ կը սիրէր չարքաշ կեանքը, համլրեց այդ բարձունքի Հ.Մ.Մ.-ի Սկաւտական շարքերը: Ան, ըլլալով աշխատասէր, կարգապահ եւ ուսումնաստեւնչ պատանի, ծնողները ի գին ամէն զոհողութեան, իր ուղին հարթեցին դէպի ուսում ու յանձնեցին կիրիկեան ճեմարանի խնամքին, որուն դասընթացքները բարեյաջող աւարտելէ յետոյ, բարձրագոյն մասնագիտական կրթութիւնը շարունակեց՝ Երեւանի ճարտարագիտական համալսարանին մէջ, ուրկէ մագիստրոսի կարգաւիճակով՝ վերադարձ Հայկ ուր աշխատանքի անցաւ պետական ելքաւորական ընկերութեան մէջ, որպէս բաժնի վարիչ, պատասխանատու գործ մը, գորս ձեռնհասօրէն ղեկավարեց՝ մօտ քառասուն տարի ո բարձր գնահատականով ալ անցաւ թոշակի: Պետական ծառայութեան ընթացքին, երբէք տուրք չտալով բազմապիսի գայթակղութեանց, խստագոյնս կիրառեց օրէնքի գերակայութիւնը եւ փոխարէնը հոն ստացաւ՝ ԱՆԿԱՇԱՌԻ պատուաբեր տիտղոսը: Ընկեր Զգուշեանը, սեփական կեանքը աշխատանքով ապահովելէ յետոյ, անսալով բնութեան օրէնքին ո պահանջին՝ իր կեանքը կապեց Հայկուհի Թոփալագեանի հետ: Իրենց ընտանեկան սիրոյ ո ջերմութեան մթնոլորտէն ի լոյս աշխարհ եկան Սիրանը, Շաղիկն ո Գէորգը, Որոնք նոյնպէս անցնելով կիրիկեան կրթական հաստատութեանց բովէն, ինթացա եղան Հ.Մ.Մ.-ի արեւուշակաւտ ու ստանձնեցին պատասխանատու պաշտօններ՝ միութեանական կեանքէն ներս: Պատուական մեր ընկերոջ հասարակական ընկալումները՝ յետ տարբեր վարչական ծառայութիւններու, Հ.Մ.Մ.-ի ատենապետ, Անդրանիկ Թատերախումբի վարչական, իր ընդունակութիւնները կատարելապէս դրսեւորեց՝ կրթական եւ ուսումնական ծառայութեանց մէջ: Նախքան հոգաբարձութեան

անդամութիւնը, ան կիրիկեանի տնօրէնութեան փոխանցման օրերուն, որ գուզողիպեցաւ վերամուտին, աշակերտներու արձանագրութեան գծով թափուր մնացած տնօրէնի պարտականութիւնը կատարեց համարձակօրէն, կողքին ունենալով՝ ընկեր Գէորգ Աթոգեանը... մօտ երկու ամիս, նորոգ հանգուցեալը, պետական գործը ձգելով ու վտանգելով իր պաշտօնը՝ ամէն օր առաւօտեան ժամը 10-էն մինչեւ երկուք, ամբողջացուց եւ կատարելապէս իր լրումին հասցուց աշակերտներու արձանագրութիւնները՝ առանց բացակայութեան եւ ուշացում: Երբ իրեն հարցուցին թէ ինչպէս կը հասցնէ կազմակերպել պետական ծառայութեան գործերը, ժպտալով ըսաւ, «Երեկոյան մինչեւ ուշ ժամերը»... Այնուհետեւ, դպրոցը եղաւ իր տարբերքը, իւրաքանչիւր անոր հետ կապուած հրամանագիր թէ օրէնք՝ թղթապանակով կը տանէր տուն՝ մանրամասնօրէն ուսումնասիրելու, որպէսզի սխալ մը թոյլ չտրուի: Իսկ որքան ժամանակ ու քրտինք թափած է, տոմարներու եւ հաշուեկշիռներու, վերանորոգման ու շինարարական աշխատանքներուն վրայ եւ այդ ամէնը՝ վասն դպրոցի ինքնաբաւութեան, տնտեսական կայունութեան... Իր նոյնիսկ կարճաժամկէտ բացակայութիւնը, հոգաբարձու ընկերներուն մօտ տազնապ կը յառաջացնէր... նոյն իրավիճակը կ'ապրէր նաեւ նորանշանակ տնօրէնութիւն... միով բանիւ, ան դպրոցին բաբախող սիրտն էր ու հոգին: Առանց չափազանցութեան, ի՛ր մօտ, սեփական տունն ո դպրոցը՝ միաձուլ ամբողջութիւն մըն էր: Հիմա պիտի ըսէք, անսխալապէս անձնաւորութիւն էր ան, բնականաբար ոչ, ...անսխալական մարդ գոյութիւն չունի, իւրաքանչիւր անհատ ալ կրնայ սխալիլ, բայց սխալը ընդունիլն ալ բարոյական յատկանիշ մը ըլլալով, ան ողջմտօրէն կ'ընդունէր զայն ...նաեւ դիւրաբորբօք էր ո շտապուհակ,

Թաթուլ Յակոբեան

Շարունակուած էջ 11-էն
կրնայ զարգանալ Ատրպէյճանի հետ չարաբերութիւնները: Կրնայ գործել Երեւանի միջոցառումները: Այսպէսով Հայաստան բացի վրաստանէն Ատրպէյճանի ճանապարհով ալ կրնայ հասնիլ Ռուսիոյ: Այս հանգրուանին ռուսական քաղաքականութիւնն ալ իր նախապատուութիւնները ունի: Ան կ'ուզէ Հայաստանին վրաստանին

ենթարկուածութիւնը նուազեցնել: Այսօր Հայաստանի արտածման կարեւոր մէկ մասը Պաթումի նաւահանգիստէն կը կախանայ: Ատրպէյճանի հետ հաստատուելիք չարաբերութիւնը այդ ճամբուն համար ալ նոր մտահոգութիւններու տեղի կու տայ: Վրաստան արդէն այս մասին իր մտահոգութիւնները պարզող յայտարարութիւններ կ'ընէ: «ԱԿՕՍ»

Ցաւակցութիւն

Խոր ցաւով իմացանք Տիկին Ալիս Յարութիւնեանի մահը: Աս տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի ու մեր շրջանակին անունով ցաւակցութիւններ կը յայտնենք հանգուցեալի գաւակներուն եւ յատկապէս ընկերուհիներ՝ Արշօ եւ Վարդուհի Յարութիւնեաններուն:

ասկան բարի, իր կապոյտ աչքերուն պէս վճիտ ո ջինջ, անյիշաչար... իր խօսքը ճակատային էր տեւական, շատեր իրմէ կը խրտնէին յաճախ, սակայն, աւելի լաւ չէ՞ ուղղակին քան՝ դաւադիր նենգութիւնը:

Անասմանօրէն բարի մեր ընկերը, գաղափարական տեսանկիւնէ, ծնունդը ըլլալով պարզ ու խոնարհ խաւի, մանկուց չէր հանդուրժեր անարդարութիւնը եւ այն բոլոր բացասական երեւոյթները, որուն յաճախ կը բախուէր ան: Այդ հաւատամքին ոչ միայն չ'դավաճանեց՝ այլ եւ հասունութեան հետ, առաւել եւս արդարութեան, հաւասարութեան գաղափարը՝ արմատացաւ իր մէջ: Երեք սկզբունքի կը դաւանէր, Առաջինը՝ Ազգայինի ու հայ ընտանիքի պահպանում, երկրորդը, - Ազատ խօսքի իրաւունքը, եւ երրորդ՝ ընկերվարութեանը: Ահա այս ազգային ո հասարակական մղումները գինք առաջնորդեցին դէպի Հնչակեանութիւն, այն ալ հասուն եւ գիտակցական տարիքին: Բայց, Կուսակցականութիւնը որքան ալ միազիծ բեւեռ մը ըլլար, ան երբէք մոլեռանդութեան չտարաւ գինք, ընդհակառակը՝ որքան մօտեցաւ ու ստանձնեց ղեկավար պաշտօններ, այնքան լայնախոհութիւնը զարգացաւ իր մէջ: Իր երազանքը, սփիւռքահայ կեանքը՝ արմատական փոփոխութեամբ մերձեցնելն էր եւ ոչ երբէք բեւեռացում, որ պառակտման ու կոր-

ծանման կ'առաջնորդէր ազգը: Իր այս մտահոգութիւններով յաճախ կը կիսուէր մտաւորական ընկերբարեկամներու հետ, յստակ պատկերացնելով՝ սփիւռքի անհեռանկար ճակատագիրը... Դժբախտաբար, ան իր կեանքի մայրամուտին տեսաւ ու իր մաշկին վրայ զգաց, մերձաւոր արեւելքի մեր բարգաւաճ գաղութներու հայթափութիւնը: Պարտադրուած պատերազմներն ու կործանարար հոթիրակոծութիւնները, իր տարիներու քրտնաթոր աշխատանքի ոչնչացումը, իր իսկ շրջանակին մէջ... աւաղ յումպէտս վատնուած ժամանակին, նուիրումին, որ անանձնական էր, հաւատք էր վասն աւելի լաւ գալիքի... որովհետեւ ինքն ու իր սերնդակիցները՝ տուին իրենց կարելիութիւններէն աւելին ու յանկարծ՝ հոգեմտաւոր ոչնչացում, մերժուածի մէկուսացում... սա՞՞ էր իր սերմանած հունձքին արդիւնքը... Վստահաբար կարելի է ըսել, որ մահուան հոգեվարքին մէջ... այս բառերը մըմնջեց՝ մեր սիրելի, անձնագոր ու նուիրեալ սերմնացան՝ ընկեր Սարգիս Զգուշեանը... Խուով գացիր ընկեր, բայց գիտցիր, որ տարեգրութիւնը՝ արժանին պիտի մատուցէ քու վաստակիդ հանդէպ...: Փոխան ծաղկի ափ մը հող՝ կիրիկեանէն Պէյրութի շիրիմիդ մեր աննման ընկեր:

ԿԱՐՊԻՍ Լեֆէճեան
Հինգշաբթի 20 Յունուար
2022 թ. Երեւան

Նորայր Արքեպիսկոպոս Պողարեան

Շարունակուած էջ 13-էն
նել ի նչպէս կարելի է»:
Երուսաղէմի Հայոց Վանքի դաւաւոր պատմութեան մէջ Նորայր Արքեպիսկոպոս Պողարեան կը մնայ առանձինն, կողքին Եղիշէ Պատրիարք Դուրեանի շնորհալի եւ պատկառելի անձին, եւ Թորգոմ Գուշակեան Պատրիարքի խոհուն եւ իմաստուն առաջնորդութեան, երկուքն այլապէս աւելի արդիւնաւոր իր կատարելագործած աննախընթաց աշխատանքով: Հայ Եկեղեցին եւ ազգը անտարակոյս շատ բան կը պարտին Նորայր Սրբազան Հօր, իսկ ինք իր արգասիքը կը պարտի իր մտաւորականի տաղանդին, գիտնականի միտքին ու կամքին, իր երկարակեաց առողջութեանը, եւ անընդմէջ վանքին մէջ իր կեանքի երկար տարիներու աղօթանուէր եւ աշխատունակ բնակութեանը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԵՆՈԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Ռեքս Կալամեան Հայաստանի Պասքեթպոլի Հաւաքականի Սարգիչ

ԱՄՆ-ի արհեստավարժ պասքեթպոլի «Էն.Պի.էյ.»-ի «Տիթրոյթ Փիսթընգ» խումբի մարզիչ՝ հայազգի Ռեքս Կալամեան նշանակուած է Հայաստանի տղոց հաւաքականի մարզիչ:



Ան ունի երեսուն տարուան փորձառութիւն եւ վստահաբար շատ բան պիտի տայ Հայաստանի ազգային խումբին: Նոր մարզիչ դեկավարութեամբ Հայաստանի հաւաքականը պիտի մասնակցի Եւրոպայի փոքր երկիրներու ախոյեանութեան, որ տեղի պիտի ունենայ Մալթայի մէջ՝ 28 Յունիսէն 3 Յուլիս:

Մանուել Պետրոսեան Շախմատի Հայաստանի Ախոյեան

Մինչեւ 20 տարեկաններու աշխարհի փոխախոյեան, արցախցի գրոսմայստեր Մանուէլ Պետրոսեան դարձաւ ճատրակի տղոց Հայաստանի ախոյեան:



Հայաստանի նորընծայ ախոյեանը վերջին՝ 11-րդ խաղաշրջանին սեւ խաղաքարերով յաղթեց Արման Միքայէլեանին եւ 8 միաւորով միանձնեայ գրաւեց առաջին տեղը: Հայկ Մարտիրոսեանն ու Շանթ Սարգսեանը 7,5 միաւորներով կիսեցին երկրորդ տեղը: Լրացուցիչ միաւորներով երկրորդ տեղն է Հայկ Մարտիրոսեանը, Շանթ Սարգսեանը զբաղեցուց երրորդ տեղը:

Կարեն Զուխաջեանը Դարձած Է IBF Inter-Continental Տիտղոսակիր



Ուքրանահայ կիսամիջին կշիռի բռնցքամարտիկ Կարեն Զուխաջեանը յաղթած է բրիտանացի Ռեան Մարտինին եւ դարձած է IBF Inter-Continental տիտղոսակիր, կը տեղեկացնէ «Արմենփրեսը»:

Մենամարտը կայացած է Գերմանիոյ Կարլսրուէ քաղաքին մէջ տեղի ունեցող Facher Sport Management բռնցքամարտի երեկոյի ժամանակ:

25-ամեայ Կարէնը 8-րդ ուսուստին յաղթած է իր մրցակցին՝ թեքնիք նոքաութով:

Պարբերականը կը չիչեցնէ, որ Զուխաջեանը վերջին անգամ մենամարտած է անցած տարուայ Յուլիսին՝ յաղթելով Նիկարագուայէն Ռոբերտո Արիասին:

Մեսիի Վերադարձին ՊՍժ-ն Յաղթեց՝ 4:0 Արդիւնքով

Ֆրանսայի առաջնութեան 22-րդ հանգրուանին առաջատար ՊՍժ-ն փարիզի մէջ մրցեցաւ «Ռեյմսի» հետ: Արժենթինացի Մաուրիսիո Փոչեթինոյի գլխավորած խումբը վստահ յաղթանակ արձանագրեց՝ 4:0 արդիւնքով:

Մէկ ամսուայ դադարէ յետոյ դաշտ վերադարձաւ ՊՍժ-ի արժենթինացի յարձակող Լիոնել Մեսին, որը 63-րդ վայրկեանին փոխարինեց արժենթինացի կիսապաշտպան Անիել Տի Մարիային:

ՊՍժ-ն 53 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 11 կէտ առաջ է երկրորդ տեղը գրաւող «Նիցայէն»:

«Պայրըն» Յաղթեց՝ 4:1 Արդիւնքով

Գերմանիոյ առաջնութեան 20-րդ հանգրուանին ախոյեան եւ առաջատար Միւնխիխ «Պայաւընը» Պեռլինի մէջ հիւրընկալուեցաւ

«Մանչեսթըր Սիթի» Յաղթարշաւը Ընդհատեցաւ

Անգլիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթըր Սիթին» հիւրընկալեց «Սաութհեմփթընին»: Խաղը աւարտեցաւ 1:1 հաւասար արդիւնքով: 12 յաջորդական յաղթանակէ յետոյ մանչեսթերեան ակումբը առաջին միաւորները կորսնցուց:

«Լիվերփուլ» Լոնտոնի մէջ մրցեցաւ «Քրիսթըլ Փելասի» դէմ եւ առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

«Չելսին» Լոնտոնի մէջ ընդունեց «Թոթենհեմին» եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

«Մանչեսթըր Սիթին» 57 կէտով կը մնայ առաջին դիրքի վրայ: «Լիվերփուլ» 22 խաղէն յետոյ 48 միաւորով երկրորդ տեղն է, իսկ «Չելսին» 24 խաղէ յետոյ ունի 47 կէտ երրորդն է:

«Ռոման» 4 Կոլ Նշանակեց Միսիթարեան Կատարեց Կոլային Փոխանցում



Իտալիոյի առաջնութեան 23-րդ հանգրուանին «Ռոման» հիւրընկալուեցաւ «Էմպոլի» կողմէ: Փորթուկալացի ժողէ Մոուրինիոյի գլխավորած խումբը յաղթանակի հասաւ 4:2 արդիւնքով: «Ռոման» իր բոլոր կոլերը նշանակեց առաջին կիսախաղին: Մէկ կոլային փոխանցում կատարեց Հենրիխ Միսիթարեան, որ «Ռոմայի» հիմնական կազմին մէջ էր եւ փոխարինուեցաւ 75-րդ վայրկեանին:

Երկրորդ խաղակէսին դաշտի տէրերը երկու կոլ նշանակելով, կրճատեցին արդիւնքը:

«Ռոման» 38 կէտով 6-րդ դիրքի վրայ է: «Նափոլին» սեփական դաշտին վրայ մրցեցաւ յետնապահ «Սալերնիթանայի» հետ եւ վստահ յաղթանակ արձանագրեց՝ 4:1 արդիւնքով եւ 43 կէտով կը գրաւէ երկրորդ տեղը:

23-րդ հանգրուանին «Միլան» ընդունեց Թուրինի «Եուվենթուսին»: Խումբերը կոլ չիւփեցին եւ խաղը աւարտեցաւ 0:0 արդիւնքով:

«Միլան» 43 կէտով հաւասարեցաւ երկրորդ տեղը գտնուող «Նափոլին»:

«Ռեալ» Վերջին Ռոպեներուն Փրկուեցաւ Պարտութենէ

Սպանիոյի առաջնութեան 22-րդ հանգրուանին Մատրիտի «Ռեալը» ընդունեց «Էլչէին» ու բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 2:2:

Մինչեւ խաղի վերջին վայրկեանները «Ռեալ» երկու կոլով ետ էր:

82-րդ վայրկեանին խորուած կիսապաշտպան Լուկա Մոդրիչ կրճատեց արդիւնքը՝ յաջող կատարելով 11 մեթրանոց հարուածը:

Արքայական խումբին պարտութենէն փրկեց պրագիլցի պաշտպան Էդեր Միլիտաոյի կոլը՝ աւելացուած երկրորդ վայրկեանին:

«Ռեալ» 50 կէտով առաջին տեղը կը գրաւէ եւ 4 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղը ընթացող «Սելիլիայի» նկատմամբ:

22-րդ հանգրուանին ախոյեան «Աթլետիքոն» Մատրիտի մէջ մրցեցաւ «Վալենսիայի» հետ: Արժենթինացի Տիեկո Սիմէոնէի գլխավորած խումբը յաղթանակ արձանագրեց 3:2 արդիւնքով:

«Աթլետիքոն» (21 խաղ) չորրորդ տեղն է՝ 36 կէտով:

«Պարսելոնան» մրցակիցի դաշտին վրայ հանդիպեցաւ «Ալաեսի» հետ: Չաւրի գլխավորած խումբը յաղթեց նուագագոյն արդիւնքով:

Միակ կոլը 87-րդ վայրկեանին նշանակեց հոլանտացի կիսապաշտպան Ֆրենքի Տէ Եոնկը

21 խաղէն յետոյ «Պարսելոնան» 35 կէտով 5-րդն է եւ 1 միաւոր ետ է «Աթլետիքոյէն»:



«Հերտաչի» կողմէ եւ վստահ յաղթանակ արձանագրեց 4:1 արդիւնքով:

«Պայրըն» 49 կէտով առաջատարն է եւ 6 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող Տոթտոնթի «Պորուսիայէն»: